29 ՆՈՅԵՄԲԵՐ 2011 ԵՐԵՔՇԱԲԹԻ 215 (4833)

Ազգ
Azg

ISSN: 1829-1651

# ԼՂՀ բանակը դիմեց պատժիչ գործողությունների

ԼՂՀ ՊԲ-ն ներկայացրել է անցած շաբաթվա ընթացքում ղարաբաղա-ադրբեջանական հակամարտ զորքերի շփման գծում հակառակորդի կողմից հրադադարի պահպանման ռեժիմի խախտման դեպքերը, որոնց թիվը հասնում է 270-ի: Ադրբեջանական բանակի առաջապահ ստորաբաժանումները ղարաբաղյան դիրքերի ուղղությամբ արձակել են ավելի քան 1.500 կրակոց: Մեկ շաբաթվա ընթացքում ադրբեջանցի դիպուկահարներն արձակել են 250 թիրախային կրակոց: «Ադրբեջանական զինված ուժերի կողմից շփման գծի ողջ երկարությամբ ծավալված վերոնշյալ նախահարձակ գործողությունները փաստում են, որ պաշտոնական Բաքուն ոչ միայն չի հարգում հակամարտության խաղաղ կարգավորմանն ուղղված միջազգային ջանքերը, այլեւ նպատակային քայլեր է ձեռնարկում շփման գծում լարվածությունը խորացնելու ուղղությամբ: Հանգամանք, որը ղարաբաղյան կողմին ստիպում է իր ընթացիկ եւ հետագա գործողություններում լինել ավելի կոշտ, իսկ պատասխաններում՝ համարժեք», ասված է ԼՂՀ ՊԲ պաշտոնական հայտարարությունում:

Հիշեցնենք, որ նոյեմբերի 19-ին եւ 20-ին առաջնային գծում ադրբեջանցի դիպուկահարների գնդակից զոհվել էին 19-ամյա ժամկետային զինծառայողներ Արեն Սիմոնյանն ու Միհրան Մարգարյանը: Սա առաջին դեպքն էր, երբ ՀՀ ՊՆ-ն եւ ԼՂՀ ՊԲ-ն հայտարարեցին, որ կդիմեն պատժիչ գործողությունների եւ ադրբեջանական կողմի կորուստն անհամաչափ կլինի: ՊԲ հետախուզական տվյալների համաձայն՝ նոյեմբերի 20-25-ը ադրբեջանական բանակի առաջապահ ստորաբաժանումները ղարաբաղյան ուժերի ձեռնարկած կանարգելիչ գործողություններից ունեցել են մինչեւ 7 զոհ եւ վիրավոր: Ադրբեջանի պաշտպանության նախարարության մամուլի ծառայության պետ Թեյմուր Աբդուլաեւը հերքել է, որ շփման գծում ղարաբաղյան ուժերի իրականացրած գործողություններից ունեցել են մինչեւ 7 զոհ եւ վիրավոր: Միաժամանակ Աբդուլաեւը հաստատել է, որ նոյեմբերի 26-ին Տերտերի շրջանում հայկական դիրքերից արձակված գնդակից մահացու վերք է ստացել 19-ամյա զինծառայող Էլմար Սամեդօղլու Խաբիբզադեն:

Հ. Հ.

# Կրոնական առաջնորդների կոչը. «Շփման գծից դուրս բերել դիպուկահարներին...»

Հ. ԱՓՅԱՆ



Վրաց ուղղափառ եկեղեցու պատրիարք Իլյա Երկրորդը, համաձայն վրացական կողմի «բանավոր վկայության», «առողջական պատճառներով» չի կարողացել մասնակցել երեկ Երեւանում աշխատանքները սկսած ԱՊՀ Միջկրոնական խորհրդի աշխատանքներին, չնայած օրեր առաջ Ռուսաստանում էր: Սակայն Կովկասի մահմեդականների հոգեւոր վարչության առաջնորդ շեյխ Ալլահշուքյուր Փաշազադեն ժամանեց Երեւան, Հայաստանի, Ռուսաստանի եւ Ադրբեջանի հոգեւոր հայրերը հանդես եկան համատեղ հայտարարությամբ, որը ներկայացրեց պատրիարք Կիրիլը: Հայտարարությամբ հոգեւոր առաջնորդները կողմ են արտահայտվել ԼՂ հիմնահարցի խաղաղ լուծմանը՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում եւ «բացառելով ռազմական լուծումը»: «Մենք կոչ ենք անում հակամարտության կողմերին՝ շփման գծից դուրս բերել դիպուկահարներին, որպեսզի արյուն չթափվի եւ մահեր չլինեն: Այդ դեպքում կստեղծվի բարոյական մթնոլորտ, որը նոր հեռանկարներ կբացի հիմնահարցի կարգավորման համար», ներկայացրեց համատեղ հայտարարությունը Մոսկվայի ու համայն Ռուսիո պատրիարքը՝ հավելելով, թե իրենք «աղոթում են, որ երկու երկրների ղեկավարների ու ժողովուրդների միջեւ բարեկամություն հաստատվի»:

Տես էջ 3

# Ֆասիեն ներկայացրեց իրեն փոխարինող Ժակ Ֆորին

Երեկ տարածաշրջանային հերթական այցով Երեւան ժամանեց ԵԱՀԿ Մինսկի խումբը: Վերջին անգամ Իգոր Պոպովին (Ռուսաստան), Ռոբերտ Բրադկեին (ԱՄՆ), ԵԱՀԿ գործող նախագահողի անձնական ներկայացուցիչ Անջեյ Կասպրշիկին ընկերակցում է ֆրանսիացի համանախագահ Բեռնար Ֆասիեն, որը Հայաստանի արտգործնախարարի, ավելի ուշ՝ ՀՀ նախագահի հետ հանդիպումների ժամանակ ներկայացրեց իրեն փոխարինող ֆրանսիացի նոր համանախագահին՝ Ժակ Ֆորին: Նախարար Նալբանդյանը համանախագահների ուշադրությունն է հրավիրել Ադրբեջանից ամենաբարձր մակարդակով շարունակվող ռազմատենչ հռետորաբանությանը եւ շփման գծում նոր զոհերի պատճառ դարձած սադրանքներին: Զրուցակիցները քննարկել են նաեւ առաջիկա դեկտեմբերի 6-7-ը Վիլնյուսում կայանալիք ԵԱՀԿ ԱԳ նախարարների խորհրդին առնչվող հարցեր: Նույն հարցերը ավելի ուշ համանախագահները քննարկել են նախագահ Սարգսյանի հետ, վերջինիս նստավայրում: Այսօր արդեն, ինչպես տեղեկանում ենք «Թրենդ»-ից, համանախագահները կմասնակցեն ղարաբաղա-ադրբեջանական սահմանում ԵԱՀԿ մոնիտորինգին եւ Ղարաբաղից կանցնեն Ադրբեջան: Ստեփանակերտում Մինսկի խմբի համանախագահ եռյակը հավանաբար այս անգամ հանդիպումներ չունենա. նախագահ Բակո Սահակյանն այժմ Արգենտինայում է:

Հ. Ա.

# Մեկ գիշերվա ընթացքում հակառակորդը 50 անգամ խախտել է հրադադարը

«**Ազգ**» օրաթերթի տեղեկություններով՝ կիրակի ամբողջ գիշեր հայ-ադրբեջանական զորքերի շփման տարբեր հատվածներում փոխհրաձգություններ են տեղի ունեցել: Հրադադարի ռեժիմը խախտվել է Տավուշի մարզի Բերդավան գյուղի պաշտպանական դիրքերում: Հակառակորդը կրակ է բացել Ղազախի շրջանի Քեմերլի գյուղի մոտակայքից: Փոխհրաձգություն է գրանցվել նաեւ Աղդամի շրջանի Յուսիֆջալի, Ֆիզուլու Գարախանբեյլի բնակավայրերի տարածքներում: Առավոտյան ժամը 5-ի սահմաններում ավտոմատային եւ գնդացրային արձակումներ են եղել Ջեբրայիլի Մեհդիլի գյուղին մոտ գտնվող հայկական պաշտպանական ամրությունների ուղղությամբ: «**Ազգ**»-ի հետ զրույցում պաշտպանության նախարարի մամլո խոսնակ **Դավիթ Կարապետյանը** հաստատեց այդ տեղեկությունը՝ հավելելով, որ մեկ գիշերվա ընթացքում ադրբեջանական կողմը 50 անգամ խախտել է հրադադարի ռեժիմը:

«Շփման գծում հրադադարի ռեժիմի խախտումն ադրբեջանական կողմից սկսում է ամենօրյա բնույթ կրել: Վերջին օրերին դրանց չափերը մեծացել են: Հայկական կողմը պատասխան է տալիս անհրաժեշտության դեպքում եւ հակառակորդի սադրիչ գործողությունները կանգնեցնելու նպատակով», ասաց Կարապետյանը՝ հավելելով, որ հայկական կողմից տուժածներ չկան:

Հ. Հ.

# Հատուկ ուշադրություն Ադրբեջանում դեսպանական մակարդակով հակահայկական ու ռասայական խտրականության քարոզչությանը



Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը երեկ ընդունել է Հարավային Կովկասում եւ Վրաստանի ճգնաժամի հարցերով Եվրոմիության հատուկ ներկայացուցիչ Ֆիլիպ Լեֆորին: Պաշտոնական հաղորդագրության համաձայն, Սարգսյանն ու Լեֆորը քննարկել են ԵՄ-ի հետ Հայաստանի համագործակցության եւ տարածաշրջանում հակամարտությունների կարգավորման հարցեր:

Արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանի հետ հանդիպմանը, բացի Հայաստան-ԵՄ համագործակցության հարցերից, մասնավորապես անդրադարձ է կատարվել արտաքին գործերի եւ անվտանգության հարցերով ԵՄ բարձր ներկայացուցիչ Քեթրին Էշթոնի Հայաստան այցելության եւ անցյալ շաբաթ Բրյուսելում տեղի ունեցած Հայաստան-Եվրոպական Միություն համագործակցության խորհրդի նիստի արդյունքներին:

Բանակցությունների օրակարգում են եղել նաեւ հակամարտության կողմերի միջեւ վստահության միջոցների ամրապնդման հարցերը: Այս առումով նախարար Նալբանդյանը ԵՄ հատուկ ներկայացուցչի ուշադրությունն է հրավիրել Ադրբեջանում դեսպանական մակարդակով իրականացվող հակահայկական եւ ռասայական խտրականության քարոզչությանը:

Ա. Հ.

# Նոր ցիկլոն քաղաքական խաղաղ ափերում

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երեկ Ազգային ժողովի արտահերթ նիստի առիթով խորհրդարան եկած լրագրողները փորձում էին մեկնաբանություններ ստանալ ՀԱԿ-ի առաջնորդ Լեւոն Տեր-Պետրոսյանի՝ ԲՀԿ-ի հետ համագործակցելու առաջարկի վերաբերյալ, սակայն ԲՀԿ-ական պատգամավորները ըստ էության որեւէ մեկնաբանությունից խուսափեցին, նշելով, որ ԲՀԿ առաջնորդն այժմ գտնվում է արտերկրում, եւ իրենք իրավասու չեն պատասխան հնչեցնելու, իրենց կարծիքն այս դեպքում մասնավոր է լինելու: Ե՛վ ԲՀԿ-ականները, ե՛ւ ՀՀԿ-ականները լրագրողներին ուղարկում էին ՀԱԿ՝ այնտեղ Տեր-Պետրոսյանի առաջարկի մասին կարծիքներ ստանալու, մանավանդ որ ՀԱԿ-ի առաջնորդն իր տեսակետը հնչեցնելիս նշել էր, թե ԲՀԿ-ի հետ համագործակցելու վերաբերյալ ՀԱԿ-ում կոնսենսուս չկա, եւ դա իր անձնական կարծիքն է: Արդյոք մի բան կա՞ այս երկուստեք խուսափողականության մեջ:

Համենայն դեպս, ՀՀԿ-ական **Հովհաննես Սահակյանը** այդպիսի տեսակետի բարձրաձայնումը Լեւոն Տեր-Պետրոսյանի ոճի մեջ դիտարկեց. «Այդ առաջարկի տակ տեսնում ենք պրովակացիա, քաղաքական դաշտում լարվածություն մտցնելու քայլ, քանի որ եթե մի քիչ մեր հիշողությունը լարենք՝ որեւէ կապող բան ԲՀԿ-ի եւ Լեւոն Տեր-Պետրոսյանի միջեւ չենք տեսնի՝ ոչ գաղափարական, ոչ գործելաոճի: Չնայած՝ քաղաքականության մեջ ոչինչ չի բացառվում, դա իրենց թիմերի որոշելիքն է: Բայց որպես քաղաքացու՝ իմ անձնական կարծիքը հետեւյալն է՝ դա Լեւոն Տեր-Պետրոսյանի ոճի մեջ է, մանավանդ եթե հաշվի առնենք, որ հանրահավաք եկող նրա ընտրազանգվածը էապես նվազել է, ինչի մասին են վկայում նաեւ հանրահավաքների միջակայքային երկար ժամանակը, դրանց բնույթն ու շեշտադրումները: Տեր-Պետրոսյանը հանրահավաքի մասնակիցներին պահելու խնդիր ունի, եւ որպեսզի հերթական ընտրություններին գնա նորմալ դիրքով՝ նա պետք է նման հայտարարություններ անի: Նպատա՞կը՝ անհաշտություն մտցնել քաղաքական ուժերի մեջ, քաշել-տանել իր կողմը, որովհետեւ մենք գիտենք նաեւ, որ ընդդիմադիր դաշտում գործող քաղաքական ուժերը մի փոքր այլ բնույթի կարող են լինել: Լուրջ մտահոգություններ չունեմ այդ հայտարարությունների վերաբերյալ», ասաց Հ. Սահակյանը:

Նրա ավելի փորձառու գործընկեր **Գագիկ Մինասյանը** նշեց, որ տեղի ունեցողը վերաբերում է ԲՀԿ-ին եւ ՀԱԿ-ին եւ չի կարծում, որ ճիշտ կլինի իր կողմից գնահատական տալը. «Ընդամենը կարող եմ խորհուրդ տալ, որ ՀԱԿ-ի ղեկավարությունը մեկ-մեկ անդրադառնա իշխանության եւ մասնավորապես նրա մասը կազմող ԲՀԿ-ի վերաբերյալ իր նախորդ գնահատականներին, ընթերցի-վերհիշի դրանք եւ ապա առաջարկներ անի», հիշեցրեց Մինասյանը:

Վերադառնալով քաղաքական կյանքում նոր ցիկլոնին՝ Տեր-Պետրոսյանի՝ ԲՀԿ-ին մեկնված ձեռքի տեսքով, նկատենք, որ դա կարող է նախ լուրջ պառակտում առաջ բերել արդեն մի անգամ դժգոհներ արտահոսեցրած ՀԱԿ-ում, որի որոշ հատվածներ ակնհայտորեն դեմ են լինելու այսպիսի դիրքորոշմանը, եթե միայն, ինչպես հանրապետականներն են նշում, սա Տեր-Պետրոսյանի համար մինչեւ հերթական խորհրդարանական ընտրությունները ժամանակ շահելու հերթական հնարք չէ, որպեսզի բոլորը քաղաքական խժդժությունների վրա կենտրոնանան, եւ մոռացվի այն, որ ՀԱԿ-ն այս պահին չի կարողանում հստակ գործելակերպ դրսեւորել:

Տես էջ 2

ԱԶԳ **Ընթացիկ**

ՀԱՆԴԻՊՈՒՄ

# 2-3 տարի անց կհասնենք «մեկ միլիոն զբոսաշրջիկ» շեմին

Ընդգծելով, որ զբոսաշրջության ոլորտը կառավարությունը հայտարարել է գերակա ուղղություն, ՀՀ էկոնոմիկայի նախարար **Տիգրան Դավթյանը** երեկ Հայաստանի զբոսաշրջային արդյունաբերության ներկայացուցիչների հետ հանդիպմանը շեշտեց, որ վերջին տարիներին ոլորտը դինամիկ զարգացում է ապրում: Այս տարվա հունվար-հոկտեմբեր ամիսներին զբոսաշրջության ոլորտում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատությամբ գրանցվել է 13.5 տոկոս աճ:

«Մեր կանխատեսումներով՝ մինչեւ տարեվերջ Հայաստան կայցելի 800.000 տուրիստ՝ 2010-ի 684.000-ի դիմաց: Կան բոլոր նախադրյալները, որ առաջիկա 2-3 տարվա ընթացքում հասնենք «1 միլիոն զբոսաշրջիկի» շեմին», ասաց նախարարը: Սակայն մինչ զբոսաշրջիկին Հայաստան հրավիրելը, Դավթյանն անհրաժեշտ է համարում առկա խնդիրները լուծել: Նրա գնահատմամբ՝ ենթակառուցվածքների ձեւավորումը՝ օդանավակայաններ, ճանապարհներ, հյուրանոցներ, առաջնահերթ հրատապության հարց է: Թեեւ վերջին տարիներին այս ուղղությամբ լուրջ դրական տեղաշարժեր են արձանագրվել, սակայն անելիքներ դեռ կան:



Հայաստանն այն երկրների շարքին է դասվում, որոնց հանդեպ զբոսաշրջիկների հետաքրքրությունը մեծ է, սակայն, ի տարբերություն տարածաշրջանի այլ զբոսաշրջային կենտրոնների, մեզ մոտ զբոսաշրջային փաթեթները թանկ են: «Նոյյան տուր» զբոսաշրջային գործակալության ներկայացուցիչ **Սոֆի Սարգսյանի** ներկայացմամբ՝ զբոսաշրջիկին հատկապես հետաքրքրում են ֆոլկլորը, հայկական ընտանիքի կենցաղավարությունը, հայկական խոհանոցը, բնությունը, ճարտարապետությունն ու պատմությունը: «Սակայն տուրփաթեթները թանկ են: Մեկնարկում է լեռնադահուկային սեզոնը եւ Հայաստան են ժամանում բազմաթիվ զբոսաշրջիկներ հատկապես Ռուսաստանից: Սակայն 1-շաբաթյա տուր փաթեթը 2 անձի համար արժե 1000 դոլար, իսկ Վրաստանում նույն փաթեթն արժե 600 դոլար: Թուրքական առաջարկներն էլ առավել էժան են, քան հայկականը»:

«Ռումեա» ընկերության նախագահ **Ռուբեն Գրիգորյանի** մեկնաբանությամբ՝ զբոսաշրջության զարգացմանը խանգարում են ոչ բավարար ենթակառուցվածքները: «Նախընտրում են 4-5-աստղանի թանկարժեք հյուրանոցներ կառուցել, մինչդեռ զբոսաշրջիկը գերադասում է պարզ, հասարակ ու մատչելի գին ունեցող համարներ: Ճանապարհներին խնդիր են առաջանում սանհանգույցների հետ կապված, ուստի պետությունը պետք է ստիպի բենզալցակայաններին՝ պատշաճ սանհանգույց ունենալ»: Խնդիրներին զուգահեռ, Գրիգորյանի հավաստմամբ, թեպետ հոկտեմբերին տուրիստական սեզոնն ավարտվում է, հայաստանյան հյուրանոցները դեռ լեփ-լեցուն են:

Տուրիզմի հայկական ինստիտուտի ռեկտոր **Ռոբերտ Մինասյանը** շեշտում է՝ զբոսաշրջության ոլորտում մասնագետների «սով» է: Դա է պատճառը, որ ոլորտը դանդաղ է զարգանում:

Զբոսաշրջության զարգացման նպատակով Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամը նախատեսում է Սեւանում բարձրլեռնային կենտրոն ստեղծել: Հիմնադրամի տնօրեն **Արման Խաչատրյանի** մեկնաբանությամբ՝ ծրագրի առաջին փուլը՝ տեխնիկա-տնտեսական հիմնավորումը, ավարտվել է, հաջորդ տարի ծրագիրը կքննարկվի ներդնողների հետ: Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է 300 միլիոն եվրո: Կենտրոնը նախատեսված կլինի ինչպես մարզիկների, այնպես էլ անհատական եւ ընտանեկան տուրիզմի համար: Խաչատրյանի գնահատականով՝ Հայաստանում տուրիզմի զարգացման համար մեծ պոտենցիալ կա, եւ դրա համար անհրաժեշտ է միավորել պետության եւ մասնավոր հատվածի ջանքերը, որպեսզի զգալի արդյունքների հասնենք: Նա առաջարկում է քայլեր ձեռնարկել, որպեսզի երկրում տուրիզմը տարբեր հարթություններում զարգանա: «Մեր իրականությունում տուրիզմն ընկալվում է անհատական հանգստի նպատակով տուրիզմ, բայց ամբողջ աշխարհում զարգանում է նաեւ բիզնես տուրիզմը՝ սեմինարներ, միջազգային կոնֆերանսներ», ասաց նա՝ շեշտելով, որ Հայաստանն այս առումով բավական հետ է:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆ-ՐԱՖՖԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

# Պատասխանի պատասխան

«Ժառանգության» առաջնորդ Րաֆֆի Հովհաննիսյանի՝ նախագահ Սարգսյանին ուղղված նամակի մասին «**Ազգը**» պատմել է: Անցած շաբաթ օրը **Սերժ Սարգսյանը**, պատասխանելով լրագրողի հարցին, Գեղարքունիքի մարզում փաստորեն պատասխան էր հնչեցրել այդ նամակին. «Ինչպես գիտեք, մենք թափ ենք հավաքում, եւ մեր նպատակն է անցկացնել շատ լավ ընտրություններ: Այստեղ ուզում եմ շեշտել, որ վերջին երկու ընտրությունները՝ ե՛ւ նախագահական, ե՛ւ խորհրդարանական, միջազգային դիտորդների կողմից գնահատվեցին որպես միջազգային չափանիշներին հիմնականում համապատասխանող ընտրություններ: Եվ մեր նպատակն է, որ այդ «հիմնականում» բառը հանվի: Այսինքն, դառնան միջազգային չափանիշներին համապատասխանող ընտրություններ, եւ հենց այդ պատճառով էլ բազմաթիվ փոփոխություններ մտցրեցինք ընտրական օրենսգրքում, որոնք արժանացան մեր եվրոպական գործընկերների, մեր մյուս գործընկերների հավանությանը: Այսինքն, մենք ոչ միայն նպատակ ունենք, այլ նաեւ կոնկրետ գործողություններ ենք կատարում: Կարծում եմ, որ այդ հայտարարության նպատակն ուղղակի սեւացնելն ու այդ գործընթացը վնասելն է: Բայց կարծում եմ, որ մեզ ոչինչ չի խանգարելու: Մենք հաստատուն քայլերով առաջ ենք շարժվելու եւ ոչ միայն ընտրություններն ենք անցկացնելու լավագույն ձեւով, այլեւ բոլոր քաղաքական գործընթացները՝ հանդարտ, հանգիստ, առանց աղմուկի, առանց ուշադրություն դարձնելու չարությամբ լցված մարդկանց, չասեմ գնահատականին, որովհետեւ իրենք իրավունք չունեն գնահատական տալու, այլ՝ իրենց կարծիքին: Հաշվի չառնելով նրանց թույնը, հաշվի չառնելով նրանց վատ նպատակը՝ մենք փորձելու ենք ամեն ինչ բարելավել, եւ կարծում եմ, որ բոլորը հնարավորություն կունենան, այսօր էլ ունեն, դրանում համոզվելու: Ամեն ինչ նորմալ է լինելու: Չնայած այդ ամենին, գիտե՛ք, մենք երեկ պատասխանեցինք պարոն Հովհաննիսյանի նամակին եւ մեր կարծիքը հրապարակեցինք», ասել էր նա:

Երեկ այս պատասխանին պատասխանեց «Ժառանգությունը»՝ հայտարարությամբ տարակուսանք հայտնելով եւ գնահատելով այդ արձագանքը «ոչ պետականավայել, հատվածական հարձակում Րաֆֆի Հովհաննիսյան անհատի ու ՀՀ առաջին արտգործնախարարի, «Ժառանգության» եւ ընդհանրապես ողջ ընդդիմության, Հայաստանի հասարակության ու քաղաքացու վրա, եւ նշելով, որ նման պահվածքն ու անհամարժեք գնահատականները հարիր չեն երկրի ղեկավարին. «Եթե Սերժ Սարգսյանը սխալվել է կամ վրիպել, կամ էլ շեղվել նախագահական ոճից եւ բովանդակությունից՝ դա էլ է պատահում, դեռ կարող է ուղղել սխալը, անհեթեթ ու անիմաստ ասպատակումների փոխարեն ընդունել Րաֆֆի Հովհաննիսյանի նամակի կետերի գերակշիռ մեծամասնության ճշմարտացիությունը եւ քայլեր ձեռնարկել այդ խնդիրներն անհապաղ լուծելու, ընտրությունները հանրորեն ընդունելի դարձնելու, Հայաստանի Հանրապետությունում վերջապես իրավական (դե յուրե) ընտրական արդյունք ապահովելու համար», ասված է «Ժառանգության» հայտարարության մեջ:

Մ. Խ.

# Էջմիածինը՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաժողովում

Պորտուգալիայի Սինտրա քաղաքում մեկնարկել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Համաշխարհային ժառանգության քաղաքներ» կազմակերպության 11-րդ համաշխարհային համաժողովը, որտեղ Հայաստանը ներկայացրել է Էջմիածնի պատվիրակությունը՝ քաղաքապետ Կարեն Գրիգորյանի գլխավորությամբ: ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Համաշխարհային ժառանգության քաղաքներ» կազմակերպությունը հիմնադրվել է 1993-ին: Այսօր կազմակերպության անդամակցում են 200 քաղաքներ՝ Երեւանն ու Էջմիածինը Հայաստանից:

Էջմիածնի քաղաքապետը հանդիպումներ է ունեցել կազմակերպության ղեկավարության, ՅՈՒՆԵՍԿՕ-ի ներկայացուցիչների եւ ավելի քան 10 քաղաքների քաղաքապետների հետ, քննարկել է քաղաքային տնտեսության կառավարման եւ այլ բնագավառներում համագործակցության հնարավորությունները:

Հ. Հ.

# «Եհովայի վկան» դատապարտվեց 6 ամսվա ազատազրկման

Երեկ ավարտվեց Եսայի քահանա Արթենյանի՝ ընդդեմ «Եհովայի վկա» կազմակերպության անդամ Անդրանիկ Մակվեցյանի, հայցով դատական նիստը: Դատարանի որոշմամբ՝ «Եհովայի վկան» դատապարտվեց 6 ամսվա ազատազրկման եւ ձերբակալվեց հենց դատարանի դահլիճից: Նա ճանաչվեց մեղավոր ՔՐ. օր. 143-րդ հոդվածով՝ հոգեւորականին վիրավորելու, սպառնալու եւ եկեղեցու տարածքում քահանայի օրինական գործունեությունը ոտնահարելու համար:

Հիշեցնենք, որ այս տարվա մայիսի 15-ին Սուրբ Երրորդություն եկեղեցու քահանա տեր Եսայիին նկատել էր, որ «Եհովայի վկաների» 2 ներկայացուցիչներ հենց եկեղեցու բակում իրենց աղանդի քարոզչությունն են իրականացնում: Քահանան մոտեցել է եւ խնդրել հեռանալ եկեղեցու տարածքից, սակայն նրանք հրաժարվել են հեռանալ, վիճաբանել են քահանայի հետ, հարվածել են նրան եւ սպառնալիքներ հնչեցրել:

Հ. Հ.

# Նոր ցիկլոն քաղաքական խաղաղ ափերում

*1-ին էջից*

Դրանից հետո, շունչը հետ բերած, ՀԱԿ-ը նոր ուժով կկարողանա վերակենդանանալ փետրվար-մարտին, ինչպես հենց ՀԱԿ-ի առաջնորդն էր նշել: Իսկ խժդժությունների առումով՝ Տեր-Պետրոսյանը կարող է ճիշտ դուրս գալ, քանի որ ՀՀԿ-ին ու ԲՀԿ-ին, անշուշտ, հարաբերություններ պարզելու մի նոր փուլ է սպասում մինչեւ նոր տարի, իսկ թե ի՞նչ տեսք կընդունի այդ «պարզումը», միայն աստծուն է հայտնի, քանի որ այս երկու ուժերի հարաբերությունների վատթարացումը ձեռնտու է բացառապես բոլոր ուժերին, իսկ տվյալ երկուսի պարագայում՝ դեռ խոր հաշվարկների կարիք կա: Համենայն դեպս՝ մամուլում մինչեւ Տեր-Պետրոսյանի հերթական ձիու քայլը (նա, այո, այդպիսի քայլերի մասնագետ է) անպաշտոն տեղեկություն կար, որ առաջիկա խորհրդարանական ընտրություններին ՀՀԿ-ն, ԲՀԿ-ն եւ ՕԵԿ-ը միասնական ցուցակով գնալու որոշում են կայացրել, եւ Գագիկ Ծառուկյանը համաձայնել է ցուցակի երրորդ հորիզոնականում գտնվել: Հիմա էլ չենք իմանա՝ այդպիսի համաձայնություն ձեռք բերվե՞լ է, թե՞ ոչ, քանի որ հարաբերությունների վերաթարմացման (կամ դրա մասին հայտարարության) ՀՀԿ-ԲՀԿ նոր ռաունդ տեղի կունենա անպայման՝ որքան էլ կողմերը չուզենային դառնալ ուրիշի խաղի գերին: Մանավանդ որ, անշուշտ, պահի ընձեռած հնարավորությունն օգտագործելու են նաեւ այլ խաղացողներ (օրինակ՝ Ռոբերտ Քոչարյանը): Եթե վերհիշենք Գագիկ Ծառուկյանին կոալիցիայից խլելու բոլոր փորձերը, ապա հստակ կարելի է ասել, որ դրանց իմպուլսները միշտ եկել են կա՛մ ընդդիմադիր (կամ՝ ընդդիմադիր ձեւացող) մամուլից, կա՛մ ներձիշխանական, բայց ըստ էության անհասկանալի քաղաքական շրջանակներից: Բոլոր դեպքերում ինտրիգ լարողները հույսը դրած են եղել Ծառուկյանի իմպուլսիվության պատճառով ինչ-որ պահի սխալ թույլ տալու հավանականության վրա (ամեն մարդ կարող է ինչ-որ պահի սխալվել), սակայն մինչեւ հիմա հաջողություն չեն արձանագրել՝ Ծառուկյանը հաջողությամբ շրջանցում էր բոլոր թակարդները: Հիմա փաստորեն այս գործն ուզում է գլուխ բերել անձամբ ՀԱԿ-ի առաջնորդը: Տեսնենք, թե ինչ կպատասխանի այս բոլորին արտերկրից վերադառնալուց հետո ԲՀԿ-ի առաջնորդ Գագիկ Ծառուկյանը, որն իր տեսակետը պիտի որ հայտնի ամենաուշը հաջորդ շաբաթ, ԱԺ նախագահի ընտրող ԱԺ հերթական քառօրյայի ընթացքում:

Ինչ էլ լինի՝ մի բան այս գլխից պարզ է, բրոունյան շարժում կսկսվի նաեւ ՀԱԿ-ում, քանի որ Տեր-Պետրոսյանի արտահայտած «անձնական» կարծիքը կարող է այս անգամ թանկ նստել նրա վրա եւ բաժանարար գծի սկիզբ դառնալ ՀԱԿ-ում առայժմ հեռավոր ուրվագծվող թեւերի համար:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն* / հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Ջավախքով մտահոգների կոչերը՝ Վրաստան մեկնող Հայաստանի նախագահին

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանն այսօր մեկնում է Վրաստան: Պաշտոնապես արված հայտարարությունը միայն մեկնում էր տեղեկացնում, չհստակեցնելով, թե ինչ տեսակի ու մակարդակի այց է կատարում Սարգսյանը հարեւան երկիր, որի հետ խնդիրներն ավելանում ու ոչ մի կերպ չեն պակասում, չնայած վերջին շրջանում վրացական կողմից միայն կրոնական համայնքներին տրված որպես այդպիսին գրանցվելու հնարավորությունը մի քանի տասնամյակի պայքարով, բայց արվեց:

Ու մինչ այդպես էլ չհստակեցված տեսակի այցով Հայաստանի նախագահը մեկնում է Վրաստան, Վրաստանի հայ համայնք կազմակերպությունը կոչ է անում Վրաստանի նախագահ Միխեիլ Սաակաշվիլուն հետ քննարկել Ցեղասպանության ու հայատյացության հարցերը՝ ի թիվս հայերենով կրթության մատչելիության, հայկական դպրոցների ու դասարանների փակման, հայ մանկավարժների անհիմն հեռացման, Վիրահայոց թեմից խլված ունեցվածքի վերադարձի խնդիրների: Ընդ որում, Վրաստանում այդպես էլ չի լուծվում Հայոց ցեղասպանության հուշարձան կանգնեցնելու համար տեղ հատկացնելու հարցը, ինչն էլ Վրաստանի հայ համայնքը խնդրում է քննարկել նախագահական հանդիպմանը:

«Երկիր» միությունն էլ փոխանցում է Հայաստանի նախագահին հասցեագրված մեկ այլ հայտարարություն, հանրագիր՝ «Ի պաշտպանություն ջավախահայ քաղաքական գործիչ Վահագն Չախալյանի»՝ Ջավախքի ավելի քան 1600 բնակչի ստորագրությամբ: Ըստ այդմ, ներկայացվում է, որ «Վրաստանի իշխանությունների կողմից քաղաքական հետապնդումների՝ ապօրինի ձերբակալության, դատավարության եւ բանտարկության» ենթարկված «Ջավախահայ ազգային, հասարակական, քաղաքական գործիչ Վահագն Չախալյանը իր գործունեության ընթացքում պայքարում է ոչ միայն Ջավախքի բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման, ջավախահայության ազգային, մշակութային, լեզվական, կրոնական եւ կրթական արժեքների պահպանման համար, այլ նաեւ Ջավախքի հայաթափման ու թուրքերով վերաբնակեցման դեմն առնելու, Հայաստանը կատարյալ շրջափակումից զերծ պահելու, ի հաշիվ թուրքերի Վրաստանի էթնիկ կազմի փոփոխումը արգելելու ուղղություններով»:

Հանրագրով Հայաստանի նախագահին կոչ է արվում Վրաստան կատարելիք այցի ընթացքում «բարձրացնել շինծու մեղադրանքներով ազատազրկված Վահագն Չախալյանի արդարացման եւ ազատ արձակման խնդիրը»:

### Մի կոչ էլ Հայկ Սանոյանին

Ի դեպ, Չախալյանի առնչությամբ վերջերս պատգամավոր Հայկ Սանոյանի հայտարարությանը, թե չի ճանաչում Չախալյանին որպես քաղաքական գործիչ ու չի տեսել նրա «ազգանպաստ գործերը», դատապարտմամբ է անդրադարձել Ջավախահայության իրավունքների պաշտպանության համակարգող խորհուրդը: 2009-ին ստեղծված այս կառույցը միավորում է ջավախահայության եւ վրացահայության խնդիրներով մտահոգ մի շարք հասարակական կազմակերպություններ, մասնավորապես «Ջավախք» հայրենակցական միությունը, Հայրենադարձության եւ հիմնավորման «Երկիր» ՀԿ միությունը, «Վիրք» կուսակցությունը, «Ջավախք» ժողովրդական շարժում» կազմակերպությունը եւ «Ռուսաստանի ջավախահայերի համայնք» կազմակերպությունը:

«Հաշվի առնելով այն հանրահայտ իրողությունը, որ պարոն Սանոյանը տնտեսական եւ այլ բնույթի սերտ կապեր ունի վրաց տարբեր պաշտոնյաների հետ, որոնց թվում են նաեւ վրաց ուժային կառույցների եւ հատուկ ծառայությունների ներկայացուցիչները, նրա վերոհիշյալ հայտարարությունը կարելի է գնահատել որպես վրաց իշխանություններին հաճոյանալու ոչ բարոյական փորձ», ասվում է խորհրդի տարածած հայտարարության մեջ, Սանոյանին կոչ անելով «զերծ մնալ ջավախահայության խնդիրների շահարկումից, դրանք առաջիկա խորհրդարանական ընտրություններում պատգամավորական աթոռը վերստանալու նպատակին որպես մանրադրամ օգտագործելուց»:

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ**

# Արթուր Բաղդասարյանն ընդունել է Ֆիլիպ Լեֆորին

ԱԱԽ քարտուղար Արթուր Բաղդասարյանն ընդունել է հերթական այցով Հայաստանում գտնվող Հարավային Կովկասում Եվրամիության հատուկ ներկայացուցիչ Ֆիլիպ Լեֆորին:

Քննարկվել են տարածաշրջանային խնդիրներին եւ մասնավորապես Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման ընթացքի հարցեր:

Պարոն Լեֆորը նշել է, որ Եվրամիությունը հաստատակամ է հիմնախնդրի արագ հանգուցալուծմանն ուղղված իր ջանքերում՝ ընդգծելով հակամարտությունը բացառապես խաղաղ ճանապարհով լուծելու անհրաժեշտությունը:

ԱԱԽ քարտուղար Արթուր Բաղդասարյանը նշել է, որ Հայաստանի դիրքորոշումն այս հարցում համահունչ է հակամարտությունները խաղաղ բանակցային ճանապարհով լուծելու միջազգային սկզբունքներին, այնինչ հարեւան երկրի դիրքորոշումը հնարավոր չէ ոչ մի կերպ կառուցողական համարել, ինչի աներկբա վկայությունն են հարեւան երկրի կողմից ձեռնարկվող գործնական քայլերը՝ ռազմական բյուջեի ավելացումը, հասարակության շրջանում թշնամական վերաբերմունքի սերմանումը, ինչպես նաեւ ռազմական հռետորաբանությունը, որն այսօր արդեն աստիճանաբար վերածվում է կոնկրետ գործողությունների՝ հրադադարի բազմակի խախտումների տեսքով:

Պարոն Լեֆորը հույս է հայտնել, որ իր հաջորդ այցի ընթացքում հիմնախնդրի կարգավորման դրական դինամիկան առավել ակնհայտ կլինի:

Զրուցակիցները մտքեր են փոխանակել նաեւ միջազգային իրադրությանն առնչվող հարցերի շուրջը:

*ԱԱԽ մամուլի գրասենյակ*

# Մեկնարկել է «ArmNet Awards 2011»-ի հանրային քվեարկությունը

Նոյեմբերի 28-ին, ժամը 00:00-ին մեկնարկեց «ArmNet Awards 2011» համահայկական վեբ-մրցույթի հանրային քվեարկությունը, որը կտեւի մինչեւ դեկտեմբերի 3-ը, ժամը 18-ը:

Քվեարկելու համար պետք է բջջային հեռախոսահամարից ուղարկել SMS 1041 կարճ համարին (1 SMS-ի գինը՝ 50 դրամ, ներառյալ ԱԱՀ), բովանդակության մասում նշելով նախընտրած մասնակից կայքի հատուկ կոդը, որը նշված է http://www.armnetawards.am/ կայքում՝ յուրաքանչյուր կայքի հասցեի կողքը: SMS քվեարկությանը կարող են մասնակցել նաեւ հայկական ինտերնետի այցելուները Ռուսաստանից, Գերմանիայից, Իսրայելից, Ղազախստանից, Ուկրաինայից, Մոլդովայից եւ մի շարք այլ երկրներից: Երկրների ամբողջական ցանկը, յուրաքանչյուր երկրից քվեարկելու համար հատուկ կարճ համարը եւ կարճ հաղորդագրության արժեքը կարելի է գտնել ArmNet Awards 2011-ի պաշտոնական վեբ կայքում:

Քվեարկությամբ ամենաշատ ձայներ հավաքած կայքը կճանաչվի «Ժողովրդական ընտրություն» անվանակարգի հաղթող:

Մրցույթի արդյունքները կամփոփվեն դեկտեմբերի 3-ին կայանալիք մրցանակաբաշխության ժամանակ:

«Armnet Awards 2011» ինտերնետային կայքերի մրցույթին այս տարի մասնակցում են 569 կայք, որոնցից ժյուրիի անդամները եւ հանրությունը կընտրեն հաղթողներին մրցույթի 8 անվանակարգերում:

# Կրոնական առաջնորդների կոչը. «Շփման գծից դուրս բերել դիպուկահարներին...»

*1-ին էջից*

### ԼՂ հակամարտությունը կրոնական չէ

Միջկրոնական խորհրդի աշխատանքներին մասնակցած ՀՀ նախագահ **Սերժ Սարգսյանը**, ողջունելով կրոնական հայրերին ու շնորհավորելով պատրիարք Կիրիլի 65-ամյակը, ընդգծեց. «Նման խճճված ու բարդ խնդրի բանակցությունները պահանջում են համբերություն եւ սկզբունքայնություն: Մեր սկզբունքային մոտեցումների շարքում պետք է շեշտեմ, որ այս հակամարտությունը չի կրում կրոնական բնույթ, եւ դրան կրոնական երանգավորում հաղորդելու բոլոր փորձերն ապակառուցողական են: Չի կարելի թույլ տալ, որ երկու մեծ կրոնները՝ քրիստոնեությունը եւ մահմեդականությունը, որոնք դավանում են մեր ժողովուրդները, փորձեն հակադրել միմյանց: Առավել եւս անթույլատրելի ենք համարում հակամարտության քողի տակ պատմամշակութային եւ հոգեւոր ժառանգության հուշարձանները ոչնչացնելու գործողությունները»: Նախագահը նաեւ ընդգծեց, որ այսօր աշխարհին անհրաժեշտ է խաղաղություն եւ ոչ թե երկպառակություն. «Այս ճանապարհին պետք է ոչ թե անտեսել ու ստորադասել, այլ խրախուսել ու ամրապնդել մարդկանց հոգեւոր արմատները: Իսկ հակասությունները ու խնդիրները պետք է կարգավորվեն շփումներով, բանակցություններով, համագործակցությամբ, ոչ թե սպառնալիքների լարման մեծացման միջոցով», ասաց Հայաստանի նախագահը՝ ընդգծելով, որ այս գագաթաժողովը գալիս է ապացուցելու, որ արդի աշխարհի խնդիրները լուծելու միակ ճիշտ ուղին ընդհանուր մարտահրավերների առջեւ բոլորիս ուժերի համախմբումն է, մարդկանց համերաշխության ամրապնդումն է՝ անկախ նրանց ազգային եւ կրոնական համոզմունքներից:



Ամենայն հայոց կաթողիկոս **Գարեգին Երկրորդը** իր խոսքում ընդգծեց, որ Հայաստանի ու ԼՂՀ-ի ժողովուրդը եւ իշխանությունները ձգտում են կայուն դարձնել խաղաղությունը, ամրապնդել բարի հարաբերությունները, համագործակցությունը հարեւան ու բոլոր պետությունների, ժողովուրդների հետ. «Այս ձգտումի վկայությունն է Թուրքիայի հետ առանց նախապայմանների հարաբերությունները կարգավորելու Հայաստանի նախագահի նախաձեռնությունը, որն ընթացք չունեցավ Թուրքիայի ժխտողական դիրքորոշման պատճառով», ընդգծեց Վեհափառը: Կաթողիկոսը նաեւ շեշտեց, որ պատրիարք Կիրիլի նախաձեռնությամբ ԱՊՀ Միջկրոնական խորհրդի նախագահության նիստերի շրջանակներում տեղի են ունենում կովկասյան կրոնական առաջնորդների եռակողմ, քառակողմ հանդիպումներ. «Միմյանց նկատմամբ հարգանքով ու եղբայրական սիրով ձգտում ենք նպաստել մեր ժողովուրդների միջեւ առկա խնդիրների լուծմանը, փոխըմբռնման ոգու եւ բարի կամքի զորակցմանը, երկխոսության արդյունավորմանը: Վստահ ենք, որ այլընտրանք չկա՝ հակամարտությունները ու խնդիրները իրենց լուծումը պետք է գտնեն խաղաղ բանակցային գործընթացներով, մարդկային հիմնարար իրավունքների պաշտպանությամբ, միջազգային օրենքների հարգման ճանապարհով»: Այս կապակցությամբ՝ իր խոսքում **Ալլահշուքյուր Փաշազադեն** եւս ընդգծեց, որ հակամարտությունները, այդ թվում՝ ղարաբաղյանը, ռազմական լուծման ճանապարհ չունեն:

### Միջկրոնական համագործակցությունն ու համերաշխությունը՝ արդի մարտահրավերներում

Խորհրդի աշխատանքներին մասնակից կրոնական առաջնորդները իրենց մտահոգությունը հայտնեցին աշխարհում այսօր տիրող իրավիճակի կապակցությամբ: Պատրիարք Կիրիլը հիշատակեց իրադրությունը Լիբիայում, Եգիպտոսում, Սիրիայում եւ այլուր: Մի շարք առաջնորդներ խոսեցին հասարակությունների շրջանում բարոյական սկզբունքների անկման կամ դրանց փոփոխման վերաբերյալ: Այս կապակցությամբ կաթողիկոս Գարեգին Երկրորդը ասաց. «Ազգերի համակեցության ու համագործակցության, կրոնական ու մշակութային երկխոսությունների կողքին վտանգվում են հոգեւոր, բարոյական արժեքները: Աճող բարեկեցությանն ու հարստությանը զուգահեռ ավելի մեծ տարածում են գտնում կարիքն ու աղքատությունը: Այս եւ այլ մի շարք հրամայականներին դիմագրավելու համար, կամ մարդասիրական արժեքների տարածման ու ժողովուրդների ազատ ապրելու ու իրենց հավատքը անկաշկանդորեն դավանելու գործում, էական է կրոնական առաջնորդների համագործակցությունը, քանզի լուծում պահանջող հարցերի վճռման համար առաջնային նշանակություն ունեն բարոյական սկզբունքների արժեւորումը, հանդուրժողականության ոգին»:

ԱՊՀ Միջկրոնական խորհրդում ներառված են 14 կրոնական ավանդական կազմակերպություններ, խորհուրդը հասարակական կազմակերպություն է, որն իր առջեւ դրել է նպատակներ. 1. ԱՊՀ երկրների ավանդական կրոնական կազմակերպությունների համատեղ գործունեության համակարգում՝ ազգամիջյան եւ միջկրոնական խաղաղության հաստատման գործում, հասարակության մեջ կայունության եւ համաձայնության ձեռքբերման, կրոնական առաջնորդների միջեւ երկխոսության զարգացման, ընդհանուր մարտահրավերների առջեւ ուժերի համախմբում, հասարակության մեջ ավանդական հոգեւոր արժեքների հաստատում: 2. ԱՊՀ երկրների համագործակցության օժանդակում՝ վերջիններիս հոգեւոր առաջնորդների եւ կրոնական համայնքների միջեւ փոխադարձ կապերի ամրապնդման ճանապարհով: 3. Համակողմանի եւ պարբերական փորձի փոխանակում՝ պետական-կրոնական, խաղաղասիրական, սոցիալական ծառայության եւ այլ հրամայական հարցերի ոլորտներում:

Այսօր Միջկրոնական խորհուրդը կշարունակի եւ կավարտի իր աշխատանքները Երեւանում, խորհրդի բոլոր ժողովների փաստաթղթերը հրապարակված են Ռուս ուղղափառ եկեղեցու patriarchia.ru կայքում:

# Հայաստանի Բ Հանրապետութիւն

Եթէ Հայաստան խորհրդային կարգերուն մաս կազմած չըլլար, այսօր Հայաստանի գոյութիւնը խնդրական կը դառնար: Յետադարձ ակնարկով մը դիտենք հայ ժողովուրդին վերջին 100 տարուան պատմութիւնը: Հազարամեակներէ ի վեր իր հայրենի տարածքի վրայ կայք հաստատած, ուռճացած հայ ժողովուրդը 1894-1896թթ. նշաւակ դարձաւ օսմանցի թուրքերու ձեռնարկած կոտորածներուն: 1915-1916թթ. թուրք իշխանութիւնը, մանրակրկիտ նախապատրաստուած ծրագիրը ի գործ դնելով, տեղահանեց ու ջարդեց 1,5 միլիոն հայեր, որ իրաւամբ համարուեցաւ ցեղասպանութիւն: Անյագուրդ թուրքեր, անբաւ, ստոր նկատելով իրենց անմարդկային արարքը, սկսան խժռել նաեւ Արեւելեան Հայաստանի քաղաքներն ու գիւղերը:

28 մայիս 1918թ. հիմնուեցաւ Հայաստանի Ա Հանրապետութիւնը, որուն տարածքը սկզբնական շրջանին 10 հազար քառակուսի կմ էր եւ ժողովուրդը կը հասնէր հազիւ 850 հազարի, որուն կէսը 1915թ. ցեղասպանութենէ փրկուած հայեր էին: Թշուառութիւնը, անօթութիւնը եւ համաճարակը օրական 100 մարդու կեանք կը խլէին:

29 նոյեմբեր 1920թ. Հայաստան ստոյգ բնաջնջումէ մը զերծ մնալու համար ստիպուած էր մուտք գործել խորհրդային կարգերու մէջ եւ դարձաւ Ս. Հայաստան. Բ Հանրապետութիւնը կազմուած էր: Հայաստանի համար միակ ճարն էր այս ձեռնարկը, որ ապահովեց խաղաղութիւն ու անդորրութիւն: Խորհրդային ժամանակաշրջանին Հայաստան ճարտարարուեստի, մշակոյթի եւ արդիւնաբերութեան ոլորտներուն մէջ դարձաւ համամիութենական յառաջադէմ հանրապետութիւններէն: Երկրորդ աշխարհամարտին հայեր ծառայեցին Կարմիր բանակի մէջ եւ պայքարեցան զաւթիչ Գերմանիոյ դէմ. հոն հայ մարտիկներուն տարած պայքարը յաղթանակ մըն էր նաեւ Թուրքիոյ դէմ, որուն բանակը կազմ ու պատրաստ կը սպասէր Ստալինգրադի անկումը՝ մահացու հարուած մը տալու համար Հայաստանին: Թուրքիա 1915թ. ցեղասպանութենէն ի վեր միտքէն չէ սրբած հայերը վերջնականապէս բնաջնջելու ծրագրը: Անժխտելի իրականութիւն մըն են նաեւ այդ շրջանին տեղի ունեցած կարգ մը անբաղձալի դէպքերն, որոնք կ՛արատաւորեն մարդկանց արժանապատուութիւնը:



*Ալեքսանդր Մյասնիկյանի հուշարձանը Երեւանում*

21 սեպտեմբեր 1991թ. Հայաստան կը հռչակէ իր անկախութիւնը խորհրդային կարգերու փուլ գալուն զուգահեռ: Երբեմնի շրջանէն մնացած կառոյցներու վրայ հիմ հաստատելով՝ Հայաստանի Գ Հանրապետութիւնը գործի կը լծուի. այդ շրջանին Թուրքիոյ եւ Ազրբեջանի Հայաստանի դէմ կիրարկած շրջափակումը խեղճացուց, բայց չկրցաւ ծունկի բերել հայ ժողովուրդը. մեծ քանակով հայեր կը լքեն հայրենիքը ու կը մեկնին այլ հորիզոններ՝ ապրուստ մը ճարելու համար: Անցեալէն ժառանգած վասահամբաւ դէպքեր, որոնք կը դրսեւորուէին կաշառակերութեամբ, երկրի մէջ ստեղծած էին այնպիսի անախորժ կլիմայ մը, որը ծնունդ տուած էր ժողովուրդին անվստահութեանը հանդէպ իր իշխանութեան: Հայաստանի կառավարութիւնը միջոցներ ձեռք առաւ՝ կասեցնելու համար այդպիսի տխրայիշատակ ախտերը, որպէսզի ժողովուրդը գոհացում ստանայ: Հայաստանի իշխանութիւնը հեռատեսութիւնը ունեցաւ իր հայ-թուրքական սահմանագիծը ռուս զինուորականութեան պաշտպանութեան յանձնելով: Հայաստանի խորհրդային շրջանին երկրին տարածքը եւ ժողովուրդի քանակը, բաղդատելով Ա Հանրապետութեան տուեալներուն՝ եռապատկուեցաւ, նոյնիսկ քառապատկուեցաւ:

Հայաստան Գ Հանրապետութեան շրջանին Սփիւռքի հայ կառոյցներու հետ համագործակցաբար արդեօք պիտի կարենա՞յ յաջողիլ եռապատկել կամ քառապատկել հայ ժողովուրդի ինքնութիւնը այնպէս, ինչպէս պատահեցաւ խորհրդային շրջանին:

ՆԵՐՍԷՍ ՏՈՒՐՄԱՆ-ԱՐԱՊԵԱՆ

Փարիզ

*Խմբ. կողմից.-* Անշուշտ համաձայն չենք հեղինակի շատ մտքերի, մի շարք գնահատականներ չեն դիմանում որեւէ քննության: Սակայն այսօր 91-րդ տարելիցն է Խորհրդային Հայաստանի ստեղծման, եւ առանց այդ հանրապետության պարզապես չէր լինի այսօրվանը, իսկ առանց առաջին հանրապետության չէր լինի երկրորդը: Սա՛ է այսօրվա խորհուրդը:

# Բաց նամակ Հայաստանի պետական եւ հոգեւոր բարձրաստիճան այրերին, Լեզվի պետական տեսչությանը եւ բջջային օպերատոր ընկերությունների ղեկավարներին

Ընթերցողը միանգամից կարող է հարց տալ. ի՞նչն է միավորում հիշյալներին կամ ի՞նչ ընդհանուր բան կա նրանց միջեւ, բացի ՀՀ-ում ապրելու փաստից: Անմիջապես պատասխանեմ՝ նրանց համար ընդհանուր է նաեւ անտարբեր վերաբերմունքը հայոց պետական եւ ազգային միակ լեզվի նկատմամբ: Զվրդովվենք այս եզրակացությունից: Մի քիչ ազգային արժանապատվություն ունեցող հայազգի մարդը քիչ հետո ինքը կհամոզվի դրանում:

Վերջերս տոնեցինք ու դեռեւս շարունակում ենք տոնել ՀՀ վերանկախացման 20-ամյակը: Բայց արդյո՞ք մեր պետությունն անկախ է, ավելի ճիշտ՝ ունե՞նք անկախության՝ իբրեւ բացարձակ արժեքի գիտակցությունը: Իմ համոզմամբ՝ ոչ: Դրա ամենից աղաղակող ապացույցներից է ներկա մոտեցումը հայոց լեզվին՝ այդ լեզվի հայրենիքում, այն էլ՝ հայոց արժեհամակարգում նրա առանցքային դերի մասին օրնիբուն խոսող պետական այրերի ու բարձրաստիճան հոգեւորականների լուռ, բայց եւ բացահայտ մեղսակցությամբ:

ՀՀ վերանկախացման հռչակումից անցել է ավելի քան 20 տարի, ՀՀ-ում բջջային կապի ներդրումից՝ ավելի քան մեկ տասնամյակ, սակայն բջջային կապով փոխանցվող բոլոր հաղորդագրությունները (օտար բնորոշումով՝ SMS-ները) կատարվում են բացառապես լատինական տառերով, իբր թե հայոց լեզվով: Սա խայտառակություն է ՀՀ-ի՝ հայկական դառնալու կոչված պետության համար, իսկ մեծագույն հայհոյանք՝ հայոց ամենասուրբ սրբի՝ Մեսրոպ Մաշտոցի անմահ հիշատակի հանդեպ: Զարմանում եմ, թե Հայ եկեղեցու հոգեւորականները չե՞ն ամաչում խունկ ծխել ու աղոթք մատուցել Մաշտոցի ամենալուսավոր դամբարանի մոտ, մինչդեռ շարունակում են մեծ տոների առթիվ մեզ շնորհավորել լատինական այբուբենի գրերով:

Հրապարակայնորեն հարց եմ ուղղում հիշյալներին՝ ի՞նչն է մեզ խանգարում պարտադրելու մեսրոպյան տառերով հայերենի ներդրումը բջջային հաղորդագրություններում: Համոզված եմ՝ միայն եւ միայն մեր ստրկամտությունը: Եկեք դրա համար չմեղադրենք միջազգային մութ ուժերին, ԵԱՀԿ Մինսկի խմբին, Եվրոմիությանը, Ռուսաստանի Դաշնությանը կամ ... այլմոլորակայիններին:

Դիմում եմ ՀՀ նախագահին, որ ատենին ավարտել է հայկական բանասիրության ֆակուլտետը. դուք, իբրեւ հրապարակայնորեն ՀՀ սահմանադրությունը հարգելու երդում տված անհատ եւ իբրեւ հայկական բանասիրության մասնագետ, անհարմար չե՞ք զգում, որ ՀՀ-ում բջջային կապի ոլորտում (դժբախտաբար, դա միակ բնագավառը չէ) համատարած կիրառվում է լատինական այբուբենը: Այստե՞ղ եք հարգում ՀՀ սահմանադրության 12-րդ՝ «լեզվական» հոդվածն ու Լեզվի օրենքը, որի առաջին իսկ հոդվածը սահմանում է, թե հայոց լեզուն պարտադիր է կիրառման ՀՀ-ում կենսագործունեության բոլոր (շեշտում եմ՝ բոլոր) բնագավառներում: Իսկ քանի որ բջջային կապի ոլորտում հայոց գրերը չեն կիրառվում (առանց մաշտոցյան գրերի՝ չի կարող հայերեն լինել), նշանակում է երկուսից մեկը՝ կամ բջջային կապը մաս չի կազմում կենսագործունեության, կամ էլ՝ թքած ունենք ՀՀ սահմանադրության եւ օրենքների վրա: Ցավոք սրտի, երկրորդն է դառն ճշմարտությունը:

Մի հարց էլ ուղղում եմ Լեզվի պետական տեսչությանը. մեր՝ հարկատուներիս գումարներով գոյատեւող, ձեր (չ)գործող կառույցը բջջային կապի ներդրումից սկսած որեւէ քայլեր է ձեռնարկել դրանում հայոց տառերի պարտադիր կիրառման ուղղությամբ, եւ, եթե նման քայլեր արվել են (ինչին հույժ կասկածում եմ), ինչո՞ւ դրանք չեն արդյունավորվել եւ ի՞նչը կամ որո՞նք են արգելակել դրան: Ես, իբրեւ հարկատու, իսկ դուք, իբրեւ իմ կողմից՝ որոշակի աշխատանք կատարելու համար վարձված աշխատողներ, պահանջում եմ ինձ հաշվետվություն ներկայացնել ձեր (չ)կատարած աշխատանքի համար:

Բավարար չէ անկախություն հռչակել, անկախություն տոնել, սուրբ թարգմանիչների տոն նշել, հայոց այբուբենի տառերի «անտառ» կանգնեցնել, ճոռոմ բառերով ու վերամբարձ ոճով ճառեր արտասանել եւ նման խաղքություններ անել: Հարկավոր է գործնականում ապացուցել, որ մենք իսկապե՛ս հարգում ենք մեր պետության սահմանադրությունն ու օրենքները, Հայ եկեղեցու սրբերին:

Նման ամոթալի փաստը շատ վատ տպավորություն է թողնում սփյուռքից ՀՀ այցելող մեր հայրենակիցների՝ հայոց ազգային արժեքներին նախանձախնդիր հատվածի վրա: Նրանցից ոմանք ինձ այպանել են նման փաստի նկատմամբ հանդուրժողականություն ցուցաբերելու համար: Նրանց բացատրում եմ, որ բազմիցս հրապարակայնորեն հանդես եմ եկել այս արտառոց իրողությունը վերացնելու պահանջով, բայց ասածներս ու գրածներս շան տեղ չեն դրել (ս. թ. մայիսի 22-ին, Շենգավիթ վարչական շրջանի սպորտային համալիրում անցկացված «բոլոր տեսակի շների միջազգային ցուցահանդեսը» վարվեց ռուսերենով, ինչը դատապարտող գրությամբ հանդես եկա «Լուսանցք» շաբաթաթերթի 2-9 հունիսի համարում, սակայն՝ գրածս շան հաչոցի իսկ արժեք չունեցավ լծակատեր պետական ծառայողների համար):

Այստեղ արժե բերել Սիրիայի նախկին նախագահ Հաֆեզ Ասադի օրինակը: Ուղիղ եթերով հեռասփռված հազվադեպ մի հարցազրույցում, պատասխանելով պետական հեռուստատեսության լրագրողի՝ երկրում բջջային կապի ներդրման ուշացման մասին հարցումին, նա պատասխանեց, թե պետական համապատասխան մարմինները աշխատանք են տանում երկու ուղղությամբ՝ վնասազերծել կամ նվազագույնի հասցնել նման կապի ներդրումով երկրի անվտանգությանն սպառնացող վտանգները եւ հենց սկզբից ապահովել արաբերենով (հասկանալ՝ արաբերեն այբուբենի տառերով. արաբի համար անհեթեթ կհնչի որեւէ այլ այբուբենի տառերով արաբերենի գոյության հավանականությունն անգամ) բջջային կապի բոլոր գործառույթները: Այսինքն՝ Սիրիայի նախագահը նույն հարթակում էր դիտարկում պետական անվտանգությունն ու արաբերենի կիրառումը: Նա այնքան խելոք էր, որպեսզի հասկանար, թե արաբերենի չկիրառումը նույնքան, եթե ոչ ավելի վտանգավոր է սիրիական պետության համար: Իսկ մեզանո՞ւմ... Ամաչում եմ, երբ որոշ հարցերում մեզ համեմատում եմ ոչ միայն արաբների, այլեւ մինչեւ վերջերս վայրենի ճանաչված հավաքականությունների հետ եւ տեսնում, թե նրանց գիտակցությունը ավելի բարձր է մեզանից՝ շատ հարցերում, մինչ մենք պարծենում ենք մեր հին, շատ հին ազգ լինելու անցյալապաշտությամբ՝ մոռանալով ներկան ու չմտածելով անգամ վաղվա մասին...

Սույնով դիմում եմ Մայր աթոռի տեղեկատվական համակարգի պատասխանատուներին՝ պահանջելով իմ բջջային հեռախոսահամարին չուղարկել շնորհավորանքներ ոչ մեսրոպյան այբուբենի տառերով (հեռախոսահամարս կարող եք ստանալ «**Ազգի**» խմբագրությունից): Սիրով ու շնորհակալությամբ կընդունեմ նույնները՝ միայն եւ միայն մեսրոպյան տառերով հայերենով: Ի՞նչ է կատարվում. Քրիստոսի սուրբ ծննդյան կամ հրաշափառ հարության տոների առթիվ իմ ուրախությունը միանգամից վերափոխվում է կատաղության, երբ Մայր աթոռից էլեկտրոնային հաղորդագրություն եմ ստանում լատինատառ «հայերենով»: Ոչ ոք իրավունք չունի իմ ուրախությունը պղտորելու, Մայր աթոռի պատասխանատունե՛ր: Եթե շարունակեք այս ծաղրին իմ կամքին հակառակ ինձ մասնակից դարձնել, խոստանում եմ հրապարակավ պախարակել ձեզ: Իմ համոզմամբ, հայոց լեզուն հայ ազգի համար այն է՝ ինչ Սուրբ Հոգին քրիստոնեական «Աստված» հասկացության համար: Աստվածորդին հայտարարեց, թե ամեն մեղք ներման է արժանանալու, բացի Սուրբ Հոգուն անարգելուց: Հեռու ինձնից համեմատությունը Փրկչի հետ, սակայն նրա նմանողությամբ հայտարարում եմ՝ ներելի են բոլոր մեղքերը՝ բացի հայոց լեզուն անարգելուց:

Պարոնայք ղեկավարնե՛ր եւ պարեշնորհ, հոգեշնորհ, գերաշնորհ, վեհափառ հայրե՛ր, բոլորիդ պահանջում եմ մինչեւ այս տարեվերջը ապահովել հայոց տառերով բջջային կապի իմ սահմանադրական իրավունքի կիրառումը, այլապես՝ սկզբում կօգտվեմ ՀՀ օրենսդրությամբ ինձ տրված հնարավորություններից՝ հասնելու իմ պահանջի բավարարմանը:

Հ. Գ. Երբ պատրաստվում էի ստորագրել այս գրությունը, ստացա էլեկտրոնային հաղորդագրություն ՀՀ-ում մարդահամարն անցկացնող պետական մարմնից՝ նորից եւ նորից լատինատառ «հայերենով»: Չկարողացա զսպել զգացմունքներս եւ յոթհարկանի հայհոյանքներ ուղղեցի անորոշ հասցեներով... Մինչեւ ե՞րբ են շարունակվելու իմ ու հայոց լեզվի տվայտանքներն ու բռնաբարումը ՀՀ կոչվող պետության մեջ, թե՞ ուզում եք, որ ես էլ թողնեմ գնամ երկրից: Պատասխանե՛ք, պարոնա՛յք: Պահանջո՛ւմ եմ: Վստահեցնեմ ձեզ, որ ոչ մեկ դեպքում չեմ գնա իմ հայրենիքից: Այս հողը, ինչպես եւ հայոց լեզուն, նաեւ իմ սեփականությունն են, եւ ոչ ոքի, հայանուն թե այլ, չեմ թողնի, որ բռնանա իմ սեփականությանը: Հասկացա՞ք:

ԳԵՎՈՐԳ ՅԱՂՋՅԱՆ

# ...Երբ Ադրբեջանում կփոխվեն կարգերը

Թերեւս բնական է, որ ամեն մի հակամարտության կարգավորման գործընթաց մեծ հետաքրքրություն է առաջացնում հայերիս շրջանում, առավել եւս, երբ նախկին խորհրդային տարածքում է կամ որեւէ առնչություն ունի ինքնորոշման խնդիրներին: Օրերս միջազգային լրահոսի ուշադրության կենտրոնում կրկին հայտնվեց մերձդնեստրյան կարգավորումը: Մոլդովայի վարչապետ Վլադիմիր Ֆիլատը եւ Մերձդնեստրի նախագահ Իգոր Սմիռնովն օրերս պայմանավորվեցին վերսկսել կարգավորման բանակցությունները, որոնք ընդհատվել էին դեռեւս 2006-ին: Առաջին պաշտոնական հանդիպումները «5+2» ձեւաչափով (Մոլդովա, Մերձդնեստր՝ որպես հակամարտության կողմեր, Ռուսաստան, Ուկրաինա՝ երաշխավոր երկրներ, ԵԱՀԿ՝ միջնորդ, ԵՄ եւ ԱՄՆ՝ դիտորդներ) տեղի կունենան նոյեմբերի 30-ին, դեկտեմբերի 1-ին: Այդ ընթացքում կողմերի միջեւ պետք է հստակեցվի հետագա կանոնավոր բանակցությունների կանոնակարգը եւ աշխատանքային գրաֆիկը: Կողմերը պատրաստակամություն են հայտնել շարունակել աշխատանքները երկաթուղային հաղորդակցության լիարժեք վերականգնման ուղղությամբ՝ ողջունելով ԵՄ կողմից առաջարկվող փորձագիտական օժանդակությունը: Հնարավոր է՝ փորձագիտական աշխատանքային խմբերի ձեւավորում, որոնք պետք է քննարկեն մաքսային խնդիրները:

Մոլդովայի եւ Մերձդնեստրի ղեկավարներն իրենց վերջին հանդիպման ընթացքում այցելել են նաեւ Բենդերի երկաթգծային դեպո, որը ԽՍՀՄ տարածքում խոշորագույններից մեկն է եղել: «Այնտեղ բոլոր սարքավորումներն աշխատանքային վիճակում են, այն պատրաստ է շահարկման», նշել է Մերձդնեստրի առաջնորդ Իգոր Սմիռնովն՝ ավելացնելով. «Այս այցելությունը եւս մեկ անգամ վկայում է, որ մենք կարող ենք շատ երկար քննարկել պետականության հարցերը, սակայն տնտեսական խնդիրներն անհրաժեշտ է հաղթահարել արդեն այսօր»:

«Կան մարդիկ, ովքեր խորհուրդներ են տալիս, կան այնպիսիք, ովքեր գործում են: Վլադիմիր Վասիլեւիչն, իմ կարծիքով, վերջիններից է, այդ իսկ պատճառով հաջողվեց նախանշել մի շարք խնդիրների հաղթահարմանն ուղղված հետագա աշխատանքներն՝ ի նպաստ ինչպես Մոլդովայի, այնպես էլ Մերձդնեստրի ժողովուրդների», Մոլդովայի վարչապետի հետ իր համատեղ աշխատանքն այսպես է գնահատել Սմիռնովը:

Եվ իսկապես, Մերձդնեստրի խնդրով բանակցությունների վերսկսումը հնարավոր դարձավ Մոլդովայում իշխանության փոփոխությունից հետո միայն: 2009-ի խորհրդարանական ընտրությունների արդյունքում երկրի վարչապետի պաշտոնը ստանձնեց Լիբերալ-դեմոկրատական կուսակցության առաջնորդ Վլադիմիր Ֆիլատը: Մինչ այդ երկրում իշխանության ղեկը տարիներ շարունակ գտնվում էր Կոմունիստական կամ Սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների ձեռքում:

«2006-10 թթ. ընթացքում Մոլդովայի եւ Մերձդնեստրի ներկայացուցիչների միջեւ ոչ մի հանդիպում տեղի չի ունեցել: Երկու տարվա ընթացքում մենք կարողացանք ոչ միայն քննարկել, այլեւ վերականգնել պաշտոնական բանակցությունները «5+2» ձեւաչափով: Բանակցությունների առաջին փուլը կմեկնարկի Վիլնյուսում նոյեմբերի 30-ին», հայտարարել է Վ. Ֆիլատը՝ Ի. Սմիռնովի հետ հանդիպման ավարտին:

Այժմ անդրադառնանք մեկ այլ հակամարտության կամ արդեն անկախացած մի միավորի, որտեղ դեռեւս լսելի են երբեմնի պատերազմի արձագանքները՝ Կոսովո: Բրյուսելում օրերս տեղի ունեցավ Բելգրադ-Պրիշտինա ուղղակի բանակցությունների հերթական փուլը: Բանակցությունների հիմնական թեման Կոսովոյի հյուսիսային սերբական շրջաններում շարունակվող հուզումներն են: Հանդիպման ընթացքում քննարկվել են նաեւ կողմերի միջեւ էլեկտրա- եւ հեռուստահաղորդակցական ցանցերի միավորման, ինչպես եւ տարածաշրջանային ֆորումներում Կոսովոյի մասնակցության հարցերը: Սերբական կողմը, սակայն, նախօրոք հայտարարել է, թե բանակցությունների արդյունքում չի պատրաստվում ճանաչել Կոսովոյի անկախությունը: Եվրոմիությունը, հրաժարվելով այս հարցում ճնշում գործադրել Բելգրադի նկատմամբ, պահանջում է, որ կողմերը «բարիդրացիական հարաբերություններ» հաստատեն: Այս պահանջը Սերբիայի՝ ԵՄ անդամակցության թեկնածու դառնալու նախապայմաններից է, ենթադրվում է, որ վերջինս նման կարգավիճակ կստանա արդեն դեկտեմբերին:

Անդրադառնալով ղարաբաղյան խնդրին՝ հիշենք՝ չնայած կարգավորման գործընթացը շարունակվում է շուրջ երկու տասնամյակ, այն երբեւէ չի ընթացել «2+միջնորդներ» ձեւաչափով, որտեղ «2»-ը հակամարտության ուղղակի կողմեր Ադրբեջանը եւ ԼՂՀ-ն պետք է լինեին: Մինչդեռ, ինչպես վկայում են և՛ Մերձդնեստրի, և՛ Կոսովոյի օրինակները, և՛ ընդհանրապես միջազգային փորձը՝ իրական կարգավորումը կամ նույնիսկ կարգավորման փորձերն անհնար են երկխոսության բացակայության պայմաններում: Պետք է դյուրահավատ լինել կարծելու համար, թե Բաքվում սա չեն գիտակցում: Մնում է եզրակացնել, որ ղարաբաղյան գործընթացում առկա վիճակն առավելագույնս համապատասխանում է Բաքվի իշխանավորների շահերին: Սակայն եթե միջազգային հանրությունը ցանկանում է իրական առաջընթաց ունենալ ղարաբաղյան խնդրում, թերեւս հնարավոր երկու լուծում կա: Առաջին՝ ավելացնել Բաքվի նկատմամբ տարաբնույթ ճնշումներն այնքան, որ վերջինս, ինչպես օրինակ, նույն Սերբիան կամ Մոլդովան, պատրաստ լինի «բարիդրացիական հարաբերություններ» հաստատելու ԼՂՀ-ի հետ: Երկրորդ՝ ամեն կերպ նպաստել Ադրբեջանում իշխող վարչակարգի փոփոխությանն ու լիբերալ-դեմոկրատական կարգերի հաստատմանը: Առավել եւս, երբ Ադրբեջանի հարեւանությամբ այդքան ոգեշնչող գործընթացներ են տեղի ունենում՝ ի դեմս շարունակվող «արաբական գարնան»:

Հ. Ս.



# Արաբական լիգայի հակասիրիական պատժամիջոցները



Արաբական պետությունների լիգայի ներկայացուցիչները ընդունել են Սիրիայի նախագահ Բաշար Ասադի վարչակարգի դեմ ուղղված տնտեսական պատժամիջոցների փաթեթ: Այդ մասին հաղորդում է Ասոշիեյթեդ պրես գործակալությունը:

Պատժամիջոցների ձեռնարկման օգտին քվեարկել են լիգայի անդամ 22 երկրներից 19-ի ներկայացուցիչները: Ֆրանսպրեսի տվյալներով՝ ձեռնպահ են մնացել մասնավորապես Լիբանանը եւ Իրաքը: Լիբանանի իշխանությունները «սահմանազատվել» են լիգայի որոշումից, իսկ Իրաքը նույնիսկ հրաժարվել է կատարել կազմակերպության հակասիրիական պահանջները: Պատժամիջոցների դեմ հանդես է եկել նաեւ Հորդանանը:

Լիգայի պատժամիջոցները նախատեսում են Սիրիայի ԿԲ-ի հետ գործառնությունների արգելում, Սիրիայում տարատեսակ նախագծերի ֆինանսավորման դադարեցում: Սիրիացի մի շարք պաշտոնյաների կարգելեն մուտք գործել արաբական ուրիշ երկրներ: Բացի դրանից, կսառեցվեն սիրիացի պաշտոնատար անձանց հաշիվները լիգայի երկրների բանկերում:

Ասոշիեյթեդ պրես գործակալությունը նշում է, որ արաբական որեւէ երկրի նկատմամբ պատժամիջոցների ձեռնարկումը բացառիկ դեպք է Արաբական լիգայի պատմության մեջ: Այդ քայլերը կապված են քաղաքական ճգնաժամը խաղաղ միջոցներով լուծելու Ասադի անկարողության հետ:

Սիրիայում բռնարարքների շարունակման պայմաններում լիգան նոյեմբերի 12-ին կասեցրել էր այդ երկրի անդամակցությունը, հարուցելով սիրիացիների զայրույթը, որոնք հարձակումներ էին սկսել արաբական մի շարք երկրների դիվանագիտական ներկայացուցչությունների վրա: Այնուհետեւ լիգան վերջնագրային կարգով Դամասկոսից պահանջել էր թույլատրել արաբ դիտորդների ազատ մուտքն ու տեղաշարժերը Սիրիայում: Ասադի կառավարությունը մերժել էր նոյեմբերի 25-ին ավարտված վերջնագրի պահանջը:

# ՆԱՏՕ-ի «սխալից» հետո Պակիստանը փակել է մատակարարման տարանցիկ ուղին

## *«Ամերիկացիները պետք է թողնեն «Շամսի» ավիաբազան»*

**Վաղեմի ռազմավարական դաշնակիցներ ԱՄՆ-ի եւ Պակիստանի հարաբերություններում շաբաթավերջին կտրուկ լարվածություն ծագեց ՆԱՏՕ-ի օդուժի թերեւս ճակատագրական սխալի հետեւանքով. ռմբակոծվեց պակիստանյան զինվորական պահակակետ, սպանվեց 24 զինծառայող:**

**Պակիստանում բողոքների ալիք բարձրացավ, հազարավոր մոլեգնած ցուցարարներ Կարաչիում եւ այլ քաղաքներում ԱՄՆ-ից եւ ՆԱՏՕ-ից պահանջեցին անհապաղ հեռանալ պակիստանյան տարածքից: Նման ցույցերից մեկի ժամանակ այրվեցին ամերիկյան դրոշներ եւ նախագահ Բարաք Օբամայի խրտվիլակը:**

**Ֆրանսպրեսը հաղորդում է, որ զայրացած է նաեւ Պակիստանի բանակի ղեկավարությունը: Գեներալները պնդում են, թե ՆԱՏՕ-ն «դիտավորյալ» է ռմբակոծել պակիստանցի զինվորականներին: Գեներալները մեղադրում են նաեւ նախագահ Ալի Զարդարիին եւ վարչապետ Յուսուֆ Ռզա Գիլանիին, որոնք «չափից ավելի» ամերիկամետ են: Քննադատությունները սաստկացան Ուսամա բեն Լադենի սպանության գաղտնի գործողությունից հետո: Այն ժամանակ զինվորականները հայտարարեցին, որ ԱՄՆ-ը ոտնահարել է Պակիստանի ինքնիշխանությունը:**

**Պակիստանյան պահակակետի ռմբակոծությունը ԱՄՆ-ի եւ նրա դաշնակիցների ամենալուրջ վրիպումներից մեկն է հակաահաբեկչական գործողությունների տասը տարիների ընթացքում: Այժմ Իսլամաբադում խոսում են արդեն ոչ թե հարաբերությունների վերանայման, այլ գրեթե դրանց խզման մասին:**

**Միջադեպից անմիջապես հետո Իսլամաբադը փակեց տարանցիկ ուղին, որով իրականացվում է Աֆղանստանում գտնվող ՆԱՏՕ-ի զորքերի մատակարարումը: Բացի դրանից, Պակիստանը ԱՄՆ-ից պահանջել է 15 օրվա ընթացքում թողնել «Շամսի» ավիաբազան (Բելուջիստանի նահանգ): Այս որոշումները անչափ ծանր կացության մեջ են դնում ԱՄՆ-ի եւ ՆԱՏՕ-ի ուժերին. պակիստանյան միջանցքը զորքերի մատակարարման ամենակարճ ու հարմար ուղին է, իսկ «Շամսի» ավիաբազան օգտագործվում է թալիբների եւ «Ալ Ղաիդայի» դեմ ուղղված անօդաչու թռչող սարքերի արձակման նպատակով:**

**Երկուշաբթի օրը Պակիստանի ներքգործնախարար Ռեհման Մալիքը հայտարարեց, որ երկրի արեւմուտքում եւ հյուսիսարեւմուտքում գտնվող տրանսպորտային միջանցքները փակված են «վերջնականապես եւ մեկընդմիշտ»: Աֆղանստանում ՆԱՏՕ-ի զորքերին վառելիք մատակարարող պակիստանցիներն իրենց հերթին ասել են, որ մոտ ժամանակներս չեն վերսկսելու մատակարարումները:**

**ԱՄՆ-Պակիստան լարվածությունը կարող է ձեռնտու լինել Ռուսաստանին, որի տարածքով անցնում է դեպի Աֆղանստան տանող երկրորդ տարանցիկ միջանցքը: ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը նշում է, որ ներկա պայմաններում այդ միջանցքի դերը կարող է մեծանալ, իսկ Ռուսաստանը, Ուզբեկստանն ու Ղրղզստանը կարող են ԱՄՆ-ի վրա քաղաքական ճնշում գործադրելու նոր հնարավորություններ ստանալ:**

# Խորհրդարանական ընտրություններ Եգիպտոսում

**Եգիպտոսում նախագահ Հոսնի Մուբարաքի պաշտոնաթողությունից հետո առաջին անգամ անցկացվում են խորհրդարանական ընտրություններ: Երեկ սկսվել է դրանց առաջին փուլը: Ֆրանսպրեսը հաղորդում է, որ երկրորդ եւ երրորդ փուլերը տեղի կունենան դեկտեմբերի 14-ին եւ հունվարի 3-ին: Տարբեր նահանգներում քվեարկությունները կանցկացվեն տարբեր օրերի:**

**Ռոյթեր գործակալությունը հաղորդում է, որ երեկ սկսված քվեարկության առաջին փուլը կավարտվի այսօր՝ նոյեմբերի 29-ին: Հաջորդ փուլերը եւս կտեւեն երկուական օր: Եգիպտոսի Բարձրագույն զինվորական խորհուրդը համապատասխան որոշում է ընդունել նոյեմբերի 25-ին:**

**Նոր խորհրդարանի վերջնական ձեւավորումը տեղի կունենա հունվարի 11-ից ոչ շուտ:**

**Վերջին շաբաթներին Եգիպտոսում վերսկսվել են բողոքի բազմամարդ ցույցերը, որոնց մասնակիցները Բարձրագույն զինվորական խորհրդից պահանջում են իշխանությունը փոխանցել երկրի քաղաքացիական կառավարությանը եւ խորհրդարանին: Ցուցարարների եւ ոստիկանների բախումների ընթացքում սպանվել են 41 եւ վիրավորվել երկու հազար անձինք, հաղորդում է BBC-ն:**



**Զինվորական ղեկավարությունը երկրի նոր վարչապետ է նշանակել 78-ամյա Քամալ Գանզուրիին: RFI ռադիոկայանը նշում է, որ բնակչությունը դժգոհ է այդ նշանակումից, քանի որ Գանզուրին վարչապետ է եղել նաեւ Մուբարաքի օրոք:**

# «Ուրտե՞ղ են երաժիշտները»

## *Կայացավ Մանվել Միկոյանի 50-ամյա հոբելյանին նվիրված միջոցառումը*

*Ես քայլելիս շատ եմ հոգնում,*
*քանզի մեծ է ծանրությունը,*
*ու շատ թեթեւ եմ՝ թռչելու պատրաստ,*
*երբ բոլորդ ինձ հետ եք, իմ կողքին,*
*լսում եմ ձեր ձայները*
*եւ բացառիկ առիթ ունեմ*
*ես իրականում Ես լինելու:*

Բանաստեղծ, լրագրող, «Լոռու մարզ» եւ «Երկունք» թերթերի գլխավոր խմբագիր, «**Ազգ**» օրաթերթի Վանաձորի սեփական թղթակից, Հայաստանի գրողների եւ ժուռնալիստների միությունների Լոռու մարզային բաժանմունքների նախագահ, երեք գրքի՝ «Շարունակվող մղձավանջ» (Երեւան, «Նաիրի» հրատ., 1991), «Անդրադարձներ (Երեւան, «Վան Արյան», 2001), «Ուրտե՞ղ են երաժիշտները» (Երեւան, «Վան Արյան», 2011) հեղինակ Մանվել Միկոյանը եւս մեկ անգամ առիթ ունեցավ «իրականում Ես լինելու», քանի որ նոյեմբերի 25-ին Լոռու մարզային գրադարանում կազմակերպված նրա 50-ամյա հոբելյանին եւ վերջերս լույս ընծայված գրքի շնորհանդեսին նվիրված միջոցառմանը մասնակցում էին նրա վաստակն ու անձնային հատկանիշները գնահատող մտավորականներ, հյուրեր՝ նրա ընկերները:

Մանվել Միկոյանի կենսագրությունն ստեղծագործ ինքնակայացման եւ տքնաջան նվիրումի կենսագրություն է, աշխատանքից երբեք չխուսափող մտավորականի կենսագրություն, ով լրագրողական գործի ծանրության տակ չդադարեց հավատարիմ մնալ իր պոետական կոչմանն ու մուսային. վկայում են նրանք:

Մ. Միկոյանը ծնվել է 1961-ի նոյեմբերի 5-ին՝ Վրաստանի Մառնեուլի շրջանի Խոժոռնի գյուղում: Բարձրագույն կրթություն է ստացել Երեւանում:

1983-ից ապրում է Վանաձորում: Աշխատել է քաղաքային «Կայծ», «Վերածնունդ», ապա մարզային «Լոռու մարզ» թերթերի խմբագրություններում: 1998-ից «Լոռու մարզի» գլխավոր խմբագիրն է, 1991-ից՝ «**Ազգ**» օրաթերթի սեփական թղթակիցը Վանաձորում: 1997-ից խմբագրում է ՀԳՄ Լոռու մարզային բաժանմունքի «Երկունք» պարբերաթերթը: Հանրապետական գրական մամուլում տպագրվում է 1982-ից («Գարուն», «Նորք», «Գրական թերթ», «Նարցիս» եւ այլն): Վերը նշված երեք գրքի հեղինակ է:

Հայաստանի ժուռնալիստների (1994-ից) եւ գրողների (2002-ից) միությունների անդամ է:

1998-ին Մ. Միկոյանն արժանացել է Հայաստանի գրողների միության Սիմոն Սիմոնյանի անվան մրցանակին՝ այդ տարիներին տպագրված բանաստեղծական շարքերի եւ «Երկունք» թերթը բարձր մակարդակով հրատարակելու համար:

2006-ին ՀՀ կրթության եւ գիտության նախարարության լեզվի պետական տեսչության հայտարարած «Անաղարտ մամուլ-2006» մրցանակաբաշխությունում «Լոռու մարզ» թերթն արժանացել է պատվոգրի՝ լավագույն մարզային թերթ ճանաչվելու կապակցությամբ: Նույն տարում ԵԱՀԿ երեւանյան գրասենյակի եւ Հայաստանի գրողների միության հայտարարած կոռուպցիայի դեմ գրված գրական-գեղարվեստական ստեղծագործությունների մրցույթում նրա «Դիետիկ ագռավներ» գործն արժանացել է լավագույն բանաստեղծության համար սահմանված մրցանակին:

2009-ին ընտրվել է Հայաստանի գրողների միության Լոռու մարզային բաժանմունքի նախագահ: Նույն տարում նա արժանացել է Հայաստանի ժուռնալիստների միության «Ազդարար» ամենամյա մրցանակին: Մ. Միկոյանի ստեղծագործությունները թարգմանաբար տպագրվել են ռուսերեն, ուկրաիներեն եւ անգլերեն լեզուներով: Այս տարի մշակութային ու հասարակական գործունեության ու մեծ վաստակի համար բանաստեղծ-լրագրողն արժանացել է ՀՀ վարչապետի շնորհակալագրին:

- Հասկանալի է, որ նրա պոեզիան ժամանակի ճշգրտությամբ է դրվել մեր սեղանին՝ 10 տարին մեկ անգամ, ինչը խոսում է մեծ պատասխանատվության մասին պոեզիայի հանդեպ: Ոչ միայն բանաստեղծ, խմբագիր, ոչ միայն հասարակական գործիչ, այլեւ հայ մարդու կերպար՝ բացառիկ նվիրվածությամբ իր ժողովրդին ու ընտանիքին: Մանվել Միկոյանը Լոռվա տարածաշրջանում՝ Լոռվա պոետական կայսրության մեջ, շատ ավելին է, քան սոսկ տաղանդավոր բանաստեղծը: Նա նաեւ կազմակերպիչ է, խմբագիր: «Երկունք» գրական թերթը, որի հիմնադիրն ու խմբագիրն է՝ ազատորեն մրցակցում է մայրաքաղաքային գրական մամուլի հետ,- իր ողջույնի խոսքում ասաց Հայաստանի գրողների միության նախագահ, բանաստեղծ, հրապարակախոս Լեւոն Անանյանը: Նա հոբելյարին հանձնեց ՀՀ մշակույթի նախարարության պատվոգիրը՝ հայ գրականության ոլորտում ունեցած ծանրակշիռ ներդրման, ինչպես նաեւ ծննդյան 50-ամյակի առթիվ: Լոռու մարզպետ Արթուր Նալբանդյանի եւ իր անունից հոբելյարին շնորհավորեց Լոռու մարզպետարանի կրթության, մշակույթի եւ սպորտի վարչության պետ Մինաս Սայադյանը՝ կարեւորելով նրա մեծ ներդրումը երիտասարդության մեջ գիր ու գրականության նկատմամբ սեր, ընթերցասիրություն սերմանելու, ինչպես նաեւ լրագրության ասպարեզում մեծ ներդրման համար: Նա Մ. Միկոյանին հանձնեց Լոռու մարզպետի շնորհավորագիրը եւ արժեքավոր նվեր. «Դուք անմնացորդ նվիրումով եք ծառայել մեր ժողովրդին՝ ստեղծելով գրական եւ լրագրողական կայուն արժեքներ, յուրովի զարգացնելով եւ նոր շունչ հաղորդելով գրական ու ժուռնալիստիկական ավանդույթներին...», մասնավորապես գրված է շնորհակալագրում: Վանաձորի քաղաքապետ Սամվել Դարբինյանի եւ իր անունից հոբելյարին շնորհավորեց նաեւ քաղաքապետարանի կրթության եւ մշակույթի բաժնի պետ Գագիկ Աղաբաբյանը:

- Վանաձորի մշակույթը շուրջ մեկդարյա տարեգրություն ունի, որի մեջ իր ուրույն տեղն ունի իմ ընկեր Մանվել Միկոյանը: Ես չեմ հիշում, թե երբ ենք ծանոթացել, սակայն գիտեմ, որ իրար հետ ուրախ ու դժվարին օրեր ենք կիսել: Շնորհակալություն, որ դու կաս,- ասաց նա՝ հանձնելով քաղաքապետի շնորհավորագիրը եւ նվեր:

Հայաստանի ժուռնալիստների միության նախագահ Աստղիկ Գեւորգյանի շնորհավորանքները եւ միության ամենաբարձր պարգեւը՝ «Հավատարիմ մասնագիտությանը» «Ոսկե մեդալը» հանձնեց միության վարչության անդամ, «Լուսարձակ» թերթի գլխավոր խմբագիր Ֆահրադ Ափուջանյանը: Ինչպես նշեց նա՝ մեդալին մինչ օրս արժանացել են ընդամենը 3 երախտավոր եւ այժմ 4-րդը՝ Մ. Միկոյանն է: «Սպիտակի մտավորականներ» ՀԿ-ն նրան շնորհակալագրի է արժանացրել հայ ժամանակակից ժուռնալիստիկայի եւ գրականության ասպարեզում ներդրած ավանդի ու ծննդյան 50-ամյակի առթիվ: Վերջին՝ «Ուրտե՞ղ են երաժիշտները» գրքի մասին գրական մամուլում գրախոսությամբ էր հանդես եկել բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հովհաննես Այվազյանը. նա ընթերցեց մի հատված հոդվածից:

Բանաստեղծին շնորհավորեցին նաեւ գրչակից ընկերները՝ բանաստեղծուհի, Ստեփան Զորյանի տուն-թանգարանի տնօրեն Լենա Անթառանյանը, բանաստեղծներ Ռազմիկ Պողոսյանը, Սերո Անտոնյանը, բանաստեղծ-թարգմանիչ Խորեն Գասպարյանը:

- Ինչպես Մ. Միկոյանն է մի առիթով ասել իր բանատողում, լրագրությունը մուսաների կառափնարան է, սակայն չմեղանչենք ճշմարտության դեմ, այդ նույն լրագրությունը նրան տվել է նաեւ դիտողականություն, վերլուծական հմտություն, հրապարակախոսական սուր ու ձաղկող պամֆլետիկ խոսք, որով աչքի է ընկնում իր պոեզիան,- ասաց Խ. Գասպարյանը՝ համառոտ անդրադառնալով նաեւ Մ. Միկոյանի պոեզիայի առանձնահատկություններին:

- Մանվել Միկոյան բանաստեղծին ինձ համար բացահայտեցի հատկապես վերջին՝ «Որտեղ են երաժիշտները» գրքից հետո. մեծ թռիչք է արված: Հանձին նրա՝ մենք աշխարհին ներկայանալի ինքնատիպ պոետ ունենք,- շնորհավորելով հոբելյարին՝ ասաց բանասիրական գիտությունների թեկնածու, «Նարցիս» ամսագրի խմբագրակազմի անդամ Արմեն Ավանեսյանը: Սրտառուչ էր նաեւ Վանաձորի գրողների մեծ բարեկամ, «Վան Արյան» հրատարակչության տնօրեն, բանաստեղծ, արձակագիր, ՀԳՄ անդամ Վիլյամ Պողոսյանի խոսքը, ով հանդիսանում է «Ուրտե՞ղ են երաժիշտները» գրքի հրատարակիչն ու հովանավորը:

Դրամատուրգ, երգիծաբան, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ Սամվել Խալաթյանի գնահատմամբ Մ. Միկոյանն առաջին հերթին հայրենասեր քաղաքացի է, որ մեր իրականության մասին իր ապրումներն ու ճշմարիտ խոսքը պոեզիայի միջոցով բերեց գրականություն:

Բանաստեղծ-լրագրողին շնորհավորեցին եւ նվերներ հանձնեցին «Վան-Մեդ» ստոմատոլոգիական կենտրոնի տնօրեն Գագիկ Քալանթարյանը, գեղանկարիչներ Կարլեն Քոչինյանը, Գեւորգ Առաքելը, Վանաձորի կերպարվեստի թանգարանի տնօրեն, գեղանկարիչ Փափագ Ալոյանը, Հովհ. Աբելյանի անվան պետական դրամատիկական թատրոնի տնօրեն Հովիկ Չախմախչյանը, ոստիկանության Լոռու մարզային վարչության պետի տեղակալ, գեղանկարիչ Վազգեն Բադալյանը, Հայկական կարմիր խաչի ընկերության Լոռու մարզային կազմակերպության նախագահ Վլադիմիր Ղարաջյանը, ՀՀ վաստակավոր արտիստ Ստեփան Դալլաքյանը:

Լոռու մարզպետարանի կրթության, մշակույթի եւ սպորտի վարչության մշակույթի բաժնի առաջատար մասնագետ Մհեր Մելիքյանը կարդաց Մ. Միկոյանի «Դիետիկ ագռավներ» արձակ բանաստեղծությունը, իսկ Վանաձորի Մ. Թավրիզյանի անվան երաժշտական քոլեջի դասախոս, կոմպոզիտոր Աիդա Ավետիսյանը անակնկալ էր պատրաստել հոբելյարի համար: Մ. Միկոյանի «Աշնան տերեւները...» բանաստեղծության բառերով երգահանը գեղեցիկ երգ էր գրել, ինչն էլ առաջին անգամ հնչեց վոկալ բաժնի 2-րդ կուրսի ուսանողուհիներ Անահիտ Ապերյանի եւ Աննա Շիրոյանի կատարմամբ: Դաշնամուրի մոտ հեղինակն էր:

Երեւանի կինոյի եւ թատրոնի պետական ինստիտուտի Վանաձորի մասնաճյուղի ռեկտոր, ՀՀ ժողովրդական արտիստ Հակոբ Ազիզյանի, «Մաշտոց» կրթամշակութային կենտրոնի նախագահ Գագիկ Աթաբեկյանի, «Թռիչք» ՀԿ նախագահ Հովհաննես Նիկողոսյանի անունից բանաստեղծին շնորհավորանքի եւ բարեմաղթանքների խոսքեր հղեց դերասան, ասմունքող Իվան Անտոնյանը՝ հանձնելով «Մաշտոց» կրթամշակութային կենտրոնի պատվոգիրը: Նա ասմունքեց նաեւ Մ. Միկոյանի գործերից: Ջիվան Սարգսյանը, որ վարում էր միջոցառումը, իր ասմունքով յուրօրինակ համ ու հոտ էր հաղորդում հանդիսությանը: Բազմաթիվ շնորհավորական նամակներից ընթերցվեցին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գրողների միության նախագահ, բանաստեղծ Վարդան Հակոբյանի եւ ՀԳՄ Շիրակի մարզային բաժանմունքի նախագահ, բանաստեղծ Անդրանիկ Կարապետյանի ուղերձները, որոնցում գնահատանքի ջերմ ու անկեղծ խոսքեր էին ասված:

Ցերեկույթը դեռեւս երկար կշարունակվեր, քանի որ մասնակիցները բազմաթիվ էին, սրտի խոսք ասել ցանկացողները՝ եւս, սակայն ժամանակի սղության պատճառով խոսքը տրվեց հոբելյարին:

- Յուրաքանչյուր ձեռքբերման համար շնորհակալ եմ ծնողներիս, ընտանիքիս, ընկերներիս: Այսօր իսկապես եւս մեկ անգամ առիթ ունեցա Ես լինելու, քանի որ շրջապատված եմ իմ սիրելիներով,- ասաց նա:

ԱՆՆԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## Անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության մրցույթի կազմակերպման եւ անցկացման մասին

«Կասկադ Ինվեստմենտս» փակ բաժնետիրական ընկերությունը հայտարարում է մրցույթ Ընկերության 2011 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացնող անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության նպատակով:

Մրցույթին կարող են մասնակցել այն ընկերությունները, որոնք ունեն.

* Ֆինանսական կազմակերպություններում ավելի քան 3 տարվա աուդիտորական աշխատանքի փորձ (ընդ որում, մրցույթում նախապատվությունը կտրվի միջազգային ճանաչում ունեցող աուդիտորական ընկերություններին):
* Աուդիտ իրականացնող խմբի ղեկավարը պետք է ունենա աուդիտորի վկայական եւ ֆինանսական ընկերության աուդիտորի առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ եւ առնվազն 3 ֆինանսական կազմակերպության աուդիտի իրականացման փորձ, իսկ աուդիտի աշխատանքներին մասնակցող աշխատակիցների առնվազն կեսը՝ առնվազն 3 տարվա աուդիտորի աշխատանքային փորձ :

Մրցույթի մասնակիցները պետք է ներկայացնեն տեխնիկական եւ ֆինանսական հայտեր՝ մեկ ծրարով:

Տեխնիկական հայտը պետք է պարունակի հետեւյալ տեղեկատվությունները եւ փաստաթղթերը՝

ա) մրցույթի մասնակցի լրիվ անվանումը, գտնվելու վայրը, հեռախոսահամարը, պետական գրանցման վկայականի, կանոնադրության, աուդիտորական գործունեությամբ զբաղվելու լիցենզիայի պատճենները

բ) աուդիտի ընդգրկման բնագավառները

գ) աուդիտի անցկացման ժամկետներն առաջին այցելությունից մինչեւ վերջնական եզրակացության տրամադրումը

դ) նախորդ հաշվետու տարվա ընթացքում իր կողմից ֆինանսական կազմակերպություններին նմանատիպ ծառայությունների մատուցման ցանկը

ե) տեղեկություններ ղեկավարի եւ որակավորված աուդիտորների վերաբերյալ

զ) աուդիտորական կազմակերպության եւ աուդիտորների անկախությունը՝ ըստ ՀՀ «Աուդիտորական գործունեության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ կետի, հաստատող փաստաթուղթ

է) մրցույթի մասնակցի հայեցողությամբ այլ անհրաժեշտ տեղեկություններ եւ փաստաթղթեր, որոնք կհաստատեն իր կողմից մատուցվելիք ծառայությունների որակը:

Ֆինանսական հայտը պետք է պարունակի հետեւյալ տեղեկատվությունները եւ փաստաթղթերը՝

ա) ծառայությունների մատուցման ընդհանուր գինը, որը պետք է ներառի բոլոր տեսակի ծախսերը, այդ թվում՝ հարկերը եւ տուրքերը

բ) ծառայությունների մատուցման ընդհանուր գնի վճարման ձեւն ու պայմանները

գ) մասնագիտական գործունեության ձախողման կամ պայմանագրով ամրագրված պարտականությունների չկատարման ռիսկի ապահովագրությունը եւ ռիսկերի բավարար փոխհատուցման չափը

դ) մրցույթում հաղթող ճանաչված ընկերությունը պարտավորվելու է «Աուդիտորական եզրակացություն» եւ «Նամակ ղեկավարությանը» փաստաթղթերը տրամադրել Ընկերությանը հայերեն եւ անգլերեն լեզուներով ոչ, ուշ քան 2012 թվականի ապրիլի 15-ը:

Մրցույթի հայտերը ներկայացվում են սոսնձված, կնքված եւ ստորագրված ծրարով, որտեղ պետք է ներառված լինեն տեխնիկական եւ ֆինանսական հայտերը: Ծրարում ներառված փաստաթղթերը պետք է կազմված լինեն բնօրինակից եւ կրկնօրինակից:

Ընկերությունը մրցույթի մասնակիցներին տալիս է տեղեկանք՝ մրցույթի հայտն ընդունելու մասին:

Մրցութային առաջարկները բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի հետ պետք է ներկայացվեն Ընկերությանը ոչ ուշ, քան սույն թվականի դեկտեմբերի 29-ը, ժամը 18:00-ն:

Մրցութային հայտերի բացումը տեղի կունենա սույն թվականի դեկտեմբերի 30-ին, ժամը 10:00, ք. Երեւան, Տերյան 105/1, գրասենյակ 406 հասցեով: Մրցույթի մասնակիցները գրավոր կտեղեկացվեն մրցույթի արդյունքների մասին մինչեւ 2012 թվականի հունվարի 16-ը:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել.
«Կասկադ Ինվեստմենտս» ՓԲԸ
ՀՀ, ք.Երեւան, Տերյան 105/1, Ցիտադել բ/կ, 406 գրասենյակ
հեռ. (+374 10) 514 315
Ֆաքս. (+374 10) 514 31
Էլ. Փոստ՝ info@cascadeinvmts.com

# Սամվել Տեր-Սահակյանը շախմատի պատանիների աշխարհի չեմպիոն

Բրազիլական Կալդաս Նովաս քաղաքում անցկացված շախմատի աշխարհի պատանեկան առաջնությունում գերազանց հանդես եկավ Սամվել Տեր-Սահակյանը՝ նվաճելով մինչեւ 18 տարեկանների չեմպիոնի տիտղոսը: Մարզական իր հարուստ կենսագրությունում սա Սամվելի առայժմ ամենամեծ նվաճումն է: Հիշեցնենք, որ անցյալ տարվա աշխարհի պատանեկան առաջնությունում էլ Սամվելը մոտ էր չեմպիոնական տիտղոսի նվաճմանը, սակայն ավարտական տուրում անհաջողության մատնվեց ու բավարարվեց 2-րդ տեղով: Պատանի շախմատիստը ժամանակին նվաճել է նաեւ մինչեւ 18 տարեկանների Եվրոպայի չեմպիոնի կոչումը, բազմիցս մրցանակային տեղեր է զբաղեցրել աշխարհի եւ Եվրոպայի պատանեկան առաջնությունների տարիքային տարբեր խմբերում:



Սամվել Տեր-Սահակյանը շատ վստահ անցկացրեց ողջ մրցաշարը՝ 9 հնարավորից վաստակելով 8 միավոր: Նա մեկնարկում 6 անընդմեջ հաղթանակ տոնեց եւ գլխավորեց աղյուսակը: Միայն 7-րդ տուրում Վլադիմիր Ֆեդոսեեւին հաջողվեց կանգնեցնել հայ շախմատիստի հաղթարշավն ու կես միավոր վաստակել: 8-րդ տուրում սեւերով հաղթելով իր մոտակա հետապնդողներից Էրիկ Ռոսենին, Սամվելը վերջին տուրից առաջ մեկ միավորով գերազանցում էր Դաս Դեբաշիսին, Վլադիմիր Ֆեդոսեեւին եւ Ստանիին: Չեմպիոնի տիտղոսին արժանանալու համար հայ շախմատիստին ընդամենը կես միավոր էր անհրաժեշտ: Ուստի ավարտական տուրում Դաս Դեբաշիսի հետ մրցավեճում ընդամենը 6 քայլ կատարելով, մրցակիցները հաշտություն կնքեցին: Նույնպիսի ելք ունեցավ նաեւ Ստանի-Ֆեդոսեեւ պարտիան: Այսպիսով, 7 միավորով 2-րդ տեղը գրավեց Վլադիմիր Ֆեդոսեեւը, բրոնզե մեդալը նվաճեց նույնպիսի արդյունքի հասած հնդիկ շախմատիստ Դաս Դեբաշիսը:

Մինչեւ 18 տարեկանների մրցաշարի մեր մյուս մասնակից Ռոբերտ Աղասարյանը 6 միավորով զբաղեցրեց 14-րդ տեղը: Ռոբերտը 8-րդ տուրում հաղթեց Մանուել Գայթանին, իսկ ավարտական պարտիան Էրիկ Ռոսենի հետ ավարտեց ոչ-ոքի:

Մրցանակային տեղի էին հավակնում նաեւ մինչեւ 16 տարեկանների մրցաշարում հանդես եկող Հայաստանի 2 ներկայացուցիչները: Սակայն վերջնագծում նրանք հաջող չխաղացին: Հովհաննես Գաբուզյանը 8-րդ տուրում սեւերով պարտվեց 3որգ Կորին ու զրկվեց մրցանակային տեղից: 9-րդ տուրում Դենիս Կադրիսի նկատմամբ հաղթանակն այլեւս նշանակություն չուներ: Գաբուզյանը 6,5 միավորով գրավեց 4-րդ տեղը:

Կարեն Գրիգորյանը 6 միավորով զբաղեցրեց 14-րդ հորիզոնականը: Նա հաղթեց Կանան Իզաթին, պարտվեց Իդանի Պոույային:

Չեմպիոնի տիտղոսը նվաճեց պերուացի 3որգ Կորին, որը վաստակեց 7,5 միավոր եւ միայն լրացուցիչ գործակիցներով գերազանցեց նույնպիսի արդյունքի հասած իրանցի Իդանի Պոույային:

Շախմատի աշխարհի պատանեկան առաջնությունում հատկապես հաջող հանդես եկան ռուսաստանցի շախմատիստները, որոնք նվաճեցին 3 ոսկե եւ 4 արծաթե մեդալ: Ռուսներից չեմպիոններ դարձան Կիրիլ Ալեքսեենկոն (մինչեւ 8 տարեկաններ), Ալեքսանդրա Օբոլենցեւան (մինչեւ 10 տ.) եւ Ալեքսանդրա Գորյաչկինան (մինչեւ 14 տ.): Իսկ ահա ղազախստանցի Ժանսայի Աբդումալիկը 4-րդ անգամ ուժեղագույնը ճանաչվեց մինչեւ 12 տարեկան աղջիկների մրցաշարում:

Հատկանշական է, որ Ռուսաստանի շախմատի ֆեդերացիան հաջորդ տարվա հունվարի 1-ից մինչեւ նոյեմբերի 1-ը ամսական 40 հազար ռուբլի պարգեւավճար է վճարելու աշխարհի չեմպիոն հռչակված շախմատիստներին, իսկ 2-րդ տեղ զբաղեցրածները կստանան 25 հազարական ռուբլի: Կարծում ենք, որ Սամվել Տեր-Սահակյանն էլ Հայաստանի շախմատի ֆեդերացիայի կողմից արժանի պարգեւի կարժանանա:

# Պարգեւներ մրցաշրջան-2011-ի դափնեկիրներին

**Հայաստանի պետական ֆիլհարմոնիայի Առնո Բաբաջանյանի անվան համերգասրահում տեղի ունեցավ ՀՀ ֆուտբոլի 20-րդ առաջնության մրցանակաբաշխության արարողությունը: Առաջինը բեմ հրավիրվեց ֆուտզալի ՀՀ չեմպիոն «Էրեբունին», որի ֆուտբոլիստներն ու մարզչական կազմը պարգեւատրվեցին ոսկե մեդալներով, իսկ թիմի ավագին հանձնվեց չեմպիոնի գավաթը: Իրենց մրցանակները ստացան նաեւ առաջնության լավագույն ֆուտբոլիստ Հակոբ Ուզունյանը («Էրեբունի») եւ 45 գոլով լավագույն ռմբարկու ճանաչված Միեր Նազարեթյանը («Պոլիտեխնիկ»):**



**Այնուհետեւ ոսկե մեդալներ հանձնվեցին ֆուտբոլի Հայաստանի առաջին խմբի մրցաշարի հաղթող «Շենգավիթին»: «Ուլիս» եւ «Բանանց-2» թիմերը ստացան «Արդար խաղի» մրցանակները: «Ոսկե խաղակոշիկ» մրցանակը հանձնվեց «Բանանցի» բրազիլացի հարձակվող Բրունո Կորեային, որը 16 գոլ էր խփել:**

**Մեծարվեցին նաեւ Հայաստանի բարձրագույն խմբի առաջնության մրցանակակիրներ «Ուլիսը», «Փյունիկն» ու «Գանձասարը», որոնք ստացան իրենց հասանելիք ոսկե, արծաթե եւ բրոնզե մեդալները: Իսկ ՀՖՖ նախագահ Ռուբեն Հայրապետյանը չեմպիոնի գավաթը հանձնեց «Ուլիսի» ավագ Դավիթ Գրիգորյանին:**

**Նշենք, որ պարգեւատրվածներից ամենատարեցն ու ամենատիտղոսակիրը «Փյունիկի» 39-ամյա ավագ Սարգիս Հովսեփյանն էր: Նա իր 12-րդ մեդալը ստացավ ու այդ ցուցանիշով զիջում է միայն այս տարի մեծ ֆուտբոլին հրաժեշտ տված շիրակցի Հովհաննես Թահմազյանին: Վերջինս 13 անգամ է մրցանակակիր դարձել: Սակայն Սարգիս Հովսեփյանը յուրօրինակ ռեկորդակիր է: Նա Հայաստանի միակ 10-ակի չեմպիոնն է:**

**Միջոցառման ընթացքում հանձնվեցին նաեւ այլ մրցանակներ: «Զարգացման հայկական բանկը» Վարազդատ Հարոյանին հանձնեց ամենահեռանկարային ֆուտբոլիստի համար նախատեսված մրցանակը: «Միկայի» պաշտպան Անդրանիկ Ոսկանյանը ստացավ «Ֆուտբոլ պլյուս» շաբաթաթերթի սահմանած «Տարվա հայտնություն» մրցանակը: Իսկ Բրունո Կորեային հանձնվեց totalfootball.am կայքի սահմանած «Թոփ-11» մրցանակը:**

**Միջոցառման ավարտին ՀՖՖ նախագահ Ռուբեն Հայրապետյանը շնորհավորեց մրցանակների արժանացածներին, մաղթեց նորանոր հաջողություններ գալիք մրցաշրջանում: Նա նաեւ ցանկություն հայտնեց, որպեսզի հայկական ակումբները չհիասթափեցնեն երկրպագուներին եվրոգավաթների մրցաշարերում ու այդ պատճառով ֆուտբոլի ֆեդերացիային քիչ քննադատեն:**

**Ինչ վերաբերում է տարվա լավագույն ֆուտբոլիստին, ապա անցկացված քվեարկության արդյունքները հայտնի կդառնան դեկտեմբերի 15-ին, երբ կմեծարվեն ֆուտբոլի Հայաստանի ազգային հավաքականի խաղացողները:**

**ՆՇԱՆԱԿՈՒՄ**

# Աշոտ Վարդապետյանը կղատաարկի Անանդ-Գելֆանդ մրցախաղը

**Միջազգային մրցավար Աշոտ Վարդապետյանը նշանակվել է Անանդ-Գելֆանդ աշխարհի առաջնության մրցախաղի գլխավոր մրցավար: Այս մասին հայտնել է ՖԻԴԵ-ի նախագահ Կիրսան Իլյումժինովը: Վարդապետյանի թեկնածությանը կողմ են եղել Անանդն ու Գելֆանդը:**

**Աշխարհի առաջնության եզրափակիչ մրցախաղը տեղի կունենա Մոսկվայի Տրետյակովյան պատկերասրահի դահլիճում 2012-ի մայիսի 10-31-ը: Մրցանակային ընդհանուր հիմնադրամը 2 մլն 550 հազար դոլար է: Մրցամարտի հաղթողը բացի աշխարհի չեմպիոնի տիտղոսից կստանա նաեւ մրցանակային գումարի 60 տոկոսը: Մյուս 40 տոկոսը բաժին կհասնի պարտվող շախմատիստին: Մրցակիցները 12 պարտիայից բաղկացած դասական շախմատի մրցախաղ կանցկացնեն: Հավասար արդյունքի դեպքում աշխարհի չեմպիոնը կորոշվի լրացուցիչ մրցախաղում:**

# Ֆեդերերը գերազանցեց Սամփրասի եւ Լենդլի ռեկորդը

**Շվեյցարացի Ռոջեր Ֆեդերերի հաղթանակով ավարտվեց Լոնդոնում անցկացված տարվա եզրափակիչ մրցաշարը: 8 ուժեղագույն թենիսիստների մրցաշարում Ֆեդերերը վստահ ելույթ ունեցավ՝ տոնելով 5 անընդմեջ հաղթանակ: Կիսաեզրափակիչում նա պարտության մատնեց իսպանացի Դավիթ Ֆեռերին (7-5, 6-3) ու մտավ եզրափակիչ, որտեղ նրա մրցակիցը ֆրանսիացի Ժո-Վիլֆրեդ Տսոնգան էր: Վերջինս կիսաեզրափակիչում պայքարից դուրս էր մղել չեխ Թոմաշ Բերդիխին (6-3, 7-5):**



**Եզրափակիչ մրցախաղն աչքի ընկավ համառ մրցապայքարով: Առաջին խաղափուլում Ֆեդերերը հաղթեց 6-3 հաշվով, իսկ 2-րդում Տսոնգան առավելության հասավ մեկ միավորի տարբերությամբ (7-6): Վճռորոշ խաղափուլն ավարտվեց Ֆեդերերի հաղթանակով (6-3), որն իր մարզական կարիերայում 6-րդ անգամ շահեց տարվա եզրափակիչ մրցաշարը: Նա գերազանցեց Փիթ Սամփրասի եւ Իվան Լենդլի ռեկորդը, որոնք 5 անգամ էին նման հաջողության հասել:**

**Ռոջեր Ֆեդերերը մարզական իր կարիերայում եզրափակիչներում 100-րդ անգամ հանդես եկավ եւ շահեց 70-րդ մրցաշարը: Այս հաղթանակը հնարավորություն տվեց Ֆեդերերին բարելավելու իր ցուցանիշները թենիսիստների դասակարգման ցանկում: Նա այժմ զբաղեցնում է 3-րդ հորիզոնականը: Ցուցակը գլխավորում է սերբ Նովակ Ջոկովիչը, 2-րդ տեղում իսպանացի Ռաֆայել Նադալն է:**

# Գարի Սպիդն ինքնասպանություն է գործել

**Ֆուտբոլի Ուելսի ազգային հավաքականի գլխավոր մարզիչ Գարի Սպիդն ինքնասպան է եղել: 42-ամյա նախկին ֆուտբոլիստին եւ ներկայիս մարզչին ոստիկանությունը հայտնաբերել է Չեսթեր քաղաքի իր բնակարանում կախված: Նրա մարմնի վրա բռնության հետքեր չեն հայտնաբերվել, ուստի ոստիկանությունը հակված է տեղի ունեցածն ինքնասպանություն որակել:**

**Որպես ֆուտբոլիստ Սպիդը հանդես է եկել «Լիդսում», «Էվերտոնում», «Նյուքասլում», «Բոլտոնում» եւ «Շեֆիլդում»: 1992-ին նա «Լիդսում» նվաճել է Անգլիայի չեմպիոնի տիտղոսը: Ֆուտբոլիստի կարիերան ավարտելուց հետո նա 2010-ին մարզչական աշխատանքի է անցել «Շեֆիլդում», իսկ դեկտեմբերից գլխավորում էր Ուելսի հավաքականը: Նրա որոնք հավաքականը G խմբում գրավել է 4-րդ տեղը:**

**Գարի Սպիդն Անգլիայի պրեմիեր լիգայի ֆուտբոլիստներից առաջինն էր, որ հատեց 500 խաղի սահմանագիծը: Ուելսի ազգային հավաքականի կազմում նա 85 խաղ էր անցկացրել՝ ցույց տալով 2-րդ արդյունքը:**

# «Ֆորմուլա-1»-ը հատեց վերջնագիծը

**«Ֆորմուլա-1» դասի ավտոմրցավազքի աշխարհի 62-րդ առաջնությունը հատեց վերջնագիծը: Վերջին փուլն անցկացվեց Բրազիլիայում: Ինչպես հայտնի է, աշխարհի չեմպիոնի հարցը վաղուց էր լուծվել: Ժամկետից շուտ չեմպիոնի տիտղոսը նվաճել էր Սեբաստիան Ֆետելը, որը հանդես է գալիս «Ռեդ Բուլում»: Բրազիլիայի Գրան պրիում նա 2-րդը հատեց վերջնագիծը, իսկ հաղթող ճանաչվեց նրա թիմակից Մարկ Ուեբերը: Մրցանակային 3-րդ տեղը գրավեց «Մակլարենի» ավտոմրցարշավորդ Ջենսոն Բատոնը:**

**Ընդհանուր հաշվարկով Ջենսոն Բատոնը զբաղեցրեց 2-րդ տեղը: Նա վաստակեց 270 միավոր ու Ֆետելին զիջեց 122 միավորով: Մրցանակային եռյակը 258 միավորով եզրափակեց Մարկ Ուեբերը:**

**«Կոնստրուկտորների գավաթի» մրցաշարում հաղթող ճանաչվեց «Ռեդ Բուլը», որը վաստակեց 650 միավոր: 497 միավորով 2-րդ տեղում «Մակլարենն» է: Եռյակը եզրափակեց «Ֆերարին» (375 միավոր):**

# Տոգոյի 6 ֆուտբոլիստներ ավտովթարի զոհ

**Տոգոյի «Էտուազ ֆիլանս» ֆուտբոլային թիմի ավտոբուսի վթարի հետեւանքով ակումբի 6 անդամներ մահացել են, մնացած 25-ը մարմնական տարբեր աստիճանի վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց: Մահացածների թվում է Տոգոյի ազգային հավաքականի նախկին դարպասապահ Չարլզ Բալոգունը:**

**Վթարը տեղի է ունեցել Ատակպամե քաղաքի մերձակայքում: Անիվի վնասվածքի պատճառով ավտոբուսը շուռ է եկել ու հրդեհ է բռնկվել:**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

# HTC հեռախոսների նոր մոդելներ՝ «Վիվասել-ՄՏՍ»-ի սպասարկման կենտրոններում

Ինչպես տեղեկացանք «Վիվասել-ՄՏՍ»-ից, ընկերության սպասարկման կենտրոններում կարելի է ձեռք բերել նաեւ HTC հանրաճանաչ սմարթֆոնների մի ամբողջ շարք՝ HTC EVO 3D, HTC TITAN, HTC Sensation, HTC Incredible S, HTC Desire S, HTC Radar եւ HTC Wildfire S: Ինչպես միշտ, այս մոդելները եւս կարելի է ձեռք բերել ապառիկ հետեւյալ պայմաններով.

| Մոդել | Գին (դրամ) | Ամսական վճար ապառիկ գնելու դեպքում (դրամ) | | |
|---|---|---|---|---|
| | | 12 ամիս | 18 ամիս | 24 ամիս |
| HTC EVO 3D | 330000 | 30254 | 21056 | 16475 |
| HTC TITAN | 325000 | 29796 | 20737 | 16225 |
| HTC Sensation | 290000 | 26587 | 18504 | 14478 |
| HTC Incredible S | 235000 | 21545 | 14994 | 11732 |
| HTC Desire S | 220000 | 20170 | 14037 | 10983 |
| HTC Radar | 220000 | 20170 | 14037 | 10983 |
| HTC Wildfire S | 135000 | 12377 | 8614 | 6740 |

Ձեռք բերելով հեռախոսները «Վիվասել-ՄՏՍ»-ի սպասարկման կենտրոններում, կարելի է մասնակցել «Սմարթ բոնուս» ծրագրին եւ ստանալ սմարթֆոնի արժեքի 50 տոկոսի չափով բոնուս:

Մանրամասն տեղեկություններ կարելի է ստանալ www.vivacell.am կայքից, 111 անվճար հեռախոսահամարից, «111 օնլայն» պորտալի միջոցով, կամ ընկերության սպասարկման կենտրոններում: **Ա. Մ.**

www.azg.am

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՆԵՐՔՈՀԻՇՅԱԼ ԳՈՒՅՔԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՃՈՒՐԴ**

| հ/հ | Գույքի հասցեն (գտնվելու վայրը) | Գույքի մակերեսը | Հողամասի մակերեսը | Գույքի օգտագործման նպատակը | Վարձակալության տրամադրման ժամկետը | Մեկնարկային գինը (վարձավճարի չափը 1 ամսվա համար) |
|---|---|---|---|---|---|---|
| *Աճուրդով վարձակալության տրամադրվող գույքերի ցանկ* | | | | | | |
| 1 | Դ.Դեմիրճյան փողոց թիվ 40/5 | 156 | 195.27 | կաթսայատուն | 5 տարի | 48.5 հազ.դրամ |
| 2 | Ա. Խաչատրյան 2-րդ թաղամաս | 263.7 | 376.98 | կաթսայատուն | 5 տարի | 76.0 հազ. դրամ |

Աճուրդին կարող են մասնակցել իրավաբանական եւ ֆիզիկական այն անձիք, ովքեր Երեւան համայնքի բյուջեի նկատմամբ օրենքով սահմանված կարգով ֆինանսական պարտավորություններ չունեն:

Աճուրդին մասնակցել ցանկացող անձինք աճուրդի կազմակերպման եւ անցկացման ընթացակարգին կարող են ծանոթանալ Երեւանի քաղաքապետարանում, ինչպես նաեւ Երեւանի քաղաքապետարանի ինտերնետային կայքում՝ WWW.YEREVAN.AM:

Աճուրդի պայմանների մանրամասներին, պայմանագրի տիպային օրինակին ծանոթանալու ու հայտ ներկայացնելու համար դիմել Երեւանի քաղաքապետարան (Արգիշտի 1, մուտքը աշտարակի կողմից, 2-րդ հարկ, հեռ. 514173):

Աճուրդին մասնակցել ցանկացողները հայտին կից ներկայացնում են տեղական վճարի՝ 10000 դրամ եւ մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարման անդորրագրերը:

Աճուրդը կայանալու է 2011թ. դեկտեմբերի 14-ին ժամը16-ին , ք. Երեւան, Արգիշտի 1 հասցեում:

Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ մինչեւ 2011թ դեկտեմբերի 14-ը, ժամը14-ը:

***ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ***

## Վաճառվում է

**Range Rover Westminster**

2003/2004 թթ., մոխրագույն, շարժիչը՝ 4,4 լ., (full): Մաքսազերծված չէ: Գերազանց վիճակ: Գինը՝ պայմանագրային:

**Հեռ.՝ 096 92 34 15:**

## Վաճառվում է

**Daewoo Matiz Best**

մակնիշի ավտոմեքենա 2008 թ., շարժիչը 1լ, վազքը՝ 4 300 կմ, արծաթագույն, ունի կոնդիցիոներ, հայելիները եւ ապակիները էլեկտր. (full), գործարանային վիճակ:

**Հեռ.՝ (091) 32-88-89**

Երեւանի Ապրանքա-Հումքային Բորսայի հարթակում շարունակվում է Ռուսաստանի Դաշնության արտադրության 911714 հատ մեկ լիտրանոց շշերով «Միլորա» ռաֆինացված արեւածաղկի ձեթի աճուրդային վաճառքը՝ դասական եղանակով, մեկ շիշը՝ 540 ՀՀ դրամ (առանց ԱԱՀ) մեկնարկային գնով: Ձեթի պիտանելիության ժամկետը մինչեւ 2012թ. սեպտեմբեր: Նշված քանակը տրոհված է 2 լոտի՝ համապատասխանաբար 868300 շիշ (համալիր 20 ենթալոտ՝ 43415 շիշ ամեն ենթալոտում) եւ 43414 շիշ:

Աճուրդն իրականացվելու է 05.12.2011թ-ին ժ.12.00 ք. Երեւան Ագաթանգեղոսի 6/1 (5-րդ հարկ) հասցեում: Աճուրդին մասնակցելու կարգին, ամբողջական ցանկին ծանոթանալու եւ լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել (37410) 565228 կամ այցելել www.borsa.am

# Պետական աջակցություն առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին եւ մանկատան շրջանավարտներին

2003 թվականից մինչեւ 2010 թվականը ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունն իրականացրել է «Պետական աջակցություն ՀՀ մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներին» ծրագիրը: Ծրագրի իրականացման համար հիմք են հանդիսացել ՀՀ կառավարության եւ ԵՄ Եվրահանձնաժողովի պարենային ապահովության ծրագրի միջեւ 2001թ. ընդունված փոխըմբռնման հուշագրի նախապայմանները: Ծրագիրը 2003-2005թթ. իրականացրել է «Հայ ժողովրդավարական ֆորում» հասարակական կազմակերպությունը, իսկ 2006թ. մինչ այժմ՝ «Հայ օգնության միություն» հասարակական կազմակերպությունը:

2003-2008 թվականների ընթացքում շահառու է դարձել 282 շրջանավարտ:

2003-2007թթ. ծրագրերով գնվել է 149 բնակարան:

Բնակարանները տրամադրվել են տասը տարի անհատույց օգտագործման պայմանով, որի համար կնքվել է անհատույց օգտագործման եռակողմ պայմանագիր (շահառու, ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն եւ ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն):

ՀՀ կառավարության 2003 թվականի հուլիսի 23-ի «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին բնակարան տրամադրելու կարգը» հաստատելու մասին N983-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն՝ հաշվառված, առանց ծնողական խնամքի մնացած, բնակարանի կարիք ունեցող երեխաների թիվը 2011 թվականի դրությամբ կազմում է 300 երեխա, որոնք չունեն մշտական բնակության վայր՝ անօթեւան են: Յուրաքանչյուր տարի միայն մանկատների 35-40 շրջանավարտ ունենում են բնակարանային խնդիրներ, որոնք լուծում են պահանջում:

2007 թվականից հետո առաջացել են մի շարք խնդիրներ, որոնց պատճառով 2008-2009 թվականներին բնակարաններ չեն գնվել:

Հարկ է նշել, որ 2010-2011 թվականների պետական բյուջեներով առանց ծնողական խնամքի մնացած, բնակարանի կարիք ունեցող երեխաների բնակարանային խնդիրների լուծման համար միջոցներ չեն նախատեսվել:

ՀՀ Կառավարությունը 2011 թվականի մարտի 31-ին հաստատեց «Հայաստանի Հանրապետության աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությանն իրավասություն վերապահելու մասին» N 341–Ն որոշումը, համաձայն որի՝ «Բնակարանային շինարարություն» ծախսային ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի «Մուշ-2» թաղամասում կառուցված բազմաբնակարան շենքերից մեկսենյականոց 6 բնակարաններ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող հաշվառված անձանց բնակարանային խնդիրների լուծման նպատակով ՀՀ կառավարության N 983–Ն որոշմամբ սահմանված կարգով բաշխում եւ հատկացնում է ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունը:

ՀՀ Կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի «Հայաստանի Հանրապետության աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության կողմից իրականացվող ծրագրերով նախատեսվող անհրաժեշտ բնակարանների քանակը հաստատելու մասին» թիվ 1051–Ն որոշման համաձայն հաստատվել է նախարարության կողմից իրականացվող ծրագրերով անհրաժեշտ բնակարանների քանակը:

Հայաստանի Հանրապետության աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության կողմից իրականացվող ծրագրերով նախատեսվում է հանրապետության տարբեր բնակավայրերում սոցիալական բնակֆոնդի համար կառուցված բնակարաններից 2011թվականի ընթացքում ՀՀ Շիրակի մարզի Գյումրի/ 6 բնակարան/ եւ Մարալիկ /12 բնակարան/ քաղաքներում բնակարան տրամադրել մանկատան շրջանավարտներին:

ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից առաջարկություն է ներկայացվել ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությանը՝ ՀՀ Լոռու մարզի Սպիտակ եւ Ստեփանավան քաղաքներում բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրի շրջանակներում բնակմակերես տրամադրել ՀՀ Լոռու մարզի մանկատան շրջանավարտներին:

Ի կատարումն ՀՀ Վարչապետի 30.09.2011 թվականի թիվ 02/14.2/16001-11 հանձնարարականի՝ ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան եւ Սպիտակ քաղաքների բազմաբնակարան շենքերից (բնակելի տներից) առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց բնակարանների տրամադրման նպատակով ՀՀ Լոռու մարզպետարանի եւ տեղական ինքնակառավարման մարմինների հետ համատեղ իրականացվել է ուսումնասիրություն ՀՀ Կառավարության 2011թվականի հունիսի 30-ի թիվ 1051–Ա որոշմամբ հաստատված 60 առանց ծնողական խնամքի մնացած անձանց շրջանում:

Համաձայն ուսումնասիրության արդյունքի, բնակարանի կարիք ունեցող թվով 60 առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանցից միայն մեկ անձ է համաձայնել ստանալ նախատեսված բնակմակերեսը, իսկ 13-ը նախընտրել են ստանալ առանձին բնակարաններ:

«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի (29.05.1996թ) եւ «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի (24.09.2002թ. ՀՕ-421-Ն) 9-րդ հոդվածի համաձայն 18 տարին լրացած՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաները, ովքեր չունեն սեփականության կամ օգտագործման իրավունքով իրենց պատկանող բնակելի տարածություն եւ վերջին 5 տարիների ընթացքում չեն օտարել սեփականության իրավունքով իրենց պատկանող բնակելի տարածությունը, իրավունք ունեն ստանալու նվազագույն սոցիալական չափորոշիչներին համապատասխան բնակելի տարածություն: ՀՀ Կառավարության «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին բնակարան տրամադրելու կարգը հաստատելու մասին» N 983–Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետով սահմանված է, որ առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին բնակարան տրամադրվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին նվազագույն սոցիալական չափորոշիչներին համապատասխան մեկսենյականոց բնակարանի կամ բնակելի տան (բնակարանում) մեկ սենյակի չափով առանձնացված բնակելի տարածություն:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունը մեկ անգամ եւս տեղեկացնում է, որ ՀՀ օրենսդրության համաձայն Հայաստանի Հանրապետությունը առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց պարտավոր է ապահովել մեկ սենյակի չափով առանձնացված բնակելի տարածությունով, իսկ հնարավորության դեպքում՝ մեկսենյականոց բնակարանով:

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 28.11.2011, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: